USAID FROM THE AMERICAN PEOPLE

CRRC Armenia

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



Երևան, 2022

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2022

Այս զեկույցն ընդգրկում է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բարեվարքության ծրագրի» (AIP) շրջանակներում Հայաստանի Հանրապետության 1520 տնային տնտեսություններում 2021թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված՝ կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության հիմնական արդյունքները: Տվյալների հավաքագրումն իրականացվել է CAPI համակարգով գործող դյուրակիր սարքերով դեմառդեմ հարցազրույցների միջոցով: Հետազոտության նպատակը ՀՀ բնակիչների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների բացահայտումն է: Համեմատության համար որոշ դեպքերում զեկույցում օգտագործվել են նաև 2019, 2008-2010թթ. անցկացված համանման հարցումների արդյունքները:

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի Ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ

Երևան 0018, Տիգրան Մեծի 47/1

Հեռ.՝ (+374 98) 948 548, (+374 93) 822 861

Էլ. հասցե՝ crrc@crrc.am

Կայքէջ՝ www.crrc.am

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԴԱՀԿ	Դատական ակտերի հարկադիր կատարում
ԴՊ	Դժվարանում եմ պատասխանել
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԲԾ	Հայաստանի բարեվարքության ծրագիր
ՀԳՄԾ	«Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման» ծրագիր
ՀԸ	Հեռուստաընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանել
ՀՌԿԿ-Հայաստան	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան
ՏՏ	Տնային տնտեսություն

** Հապավումները նշված են այբբենական կարգով:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 12

ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 16

1.1. Հետազոտության հարցաթերթը 17

1.2. Ընտրանքի մեթոդաբանությունը 17

1.3. Դաշտային աշխատանքներ 18

1.4. Հարցվածների ընդհանուր բնութագիրը, ընտրանքի նկարագրությունը 19

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 20

2.1. Կուռուպցիոն գործողությունների ընկալումը 21

2.2. Կոռուպցիայի դրսևորման ձևերի ընկալումը 24

2.3. Կոռուպցիոն վարքագծի ընկալումներն ըստ ոլորտների և հաստատությունների 27

2.4. Կոռուպցիոն վարքագծի ընկալումներն ըստ տեղեկացվածության աստիճանի 32

ԳԼՈՒԽ 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ 36

3.1. Կոռուպցիայի ազդեցությունը քաղաքացիների վրա 37

3.2. Կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրները 38

3.3. Կոռուպցիոն եղանակով խնդիրները լուծելու հիմնական դրդապատճառները 42

ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 44

4.1. Պետական մարմինների և հասարարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածությունը 45

4.2. Հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ տեղեկացվածությունը 46

ԳԼՈՒԽ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 48

5.1. Անհատական փորձառությունը կոռուպցիոն իրավիճակներում 49

5.2. Հակակոռուպցիոն հնարավոր անհատական գործողությունները 51

5.3. Հակակոռուպցիոն անհատական վարքագծի ընկալումները 54

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 66

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐՑԱԹԵՐԹ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 97

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՄԱԹՎԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ 99

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը, որն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի (ՀՌԿԿ-Հայաստան) կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Հայաստանի բարեվարքության ծրագրի (ՀԲԾ) պատվերով, հինգերորդ համանման հետազոտությունն է:

Հետազոտության հիմնական նպատակն է ստանալ հնարավորինս համապարփակ տեղեկատվություն ՀՀ բնակիչների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների և վարքագծի դրսևորումների մասին: Հետազոտության արդյունքները կնպաստեն այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ հնարավոր կլինի նվազեցնել կոռուպցիան և համապատասխանաբար ամրապնդել Հայաստանում բարելավված կառավարումն ու հաշվետվողականությունը:

Հետազոտությունն իրականացվել է 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հանրապետության ողջ տարածքում դեմ առ դեմ հարցման միջոցով, որին մասնակցել է 1520 հարցվող:

Ուսումնասիրության ուշադրության կենտրոնում են հետևյալ հարցերը. կոռուպցիայի հասարակական ընկալումը ՀՀ-ում, կոռուպցիոն իրավիճակներում անհատական վարքագիծը և փորձառությունը, հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածությունը և հակակոռուպցիոն անհատական վարքագիծն ու գործողությունները:

Կոռուպցիայի հասարակական ընկալումը Հայաստանում

ՀՀ ազգաբնակչության մեծ մասը գտնում է, որ Հայաստանում կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ: Առավել տարածված կոռուպցիոն դրսևորումներ են համարվել հովանավորչությունը, բիզնեսի և պետական պաշտոնի համատեղումը և կաշառակերությունը:

Հանրության կողմից ոչ թափանցիկ են ընկալվում առաջին հերթին կուսակցությունների կամ դաշինքների և ԶԼՄ-երի ֆինանսավորման աղբյուրները: Տարածված է այն ընկալումը, որ առկա է օլիգարխների շահերի փոխկախվածություն կուսակցությունների և բարձրաստիճան պաշտոնյաների շահերի հետ: Ընդհանուր առմամբ, հանրությունը ԶԼՄ-ների

և կուսակցությունների գործունեության՝ թափանցիկության և հաշվետվողականության մասին պարբերար տեղեկանալու կարիք ունի:

Քաղաքացիների մեծամասնությունը, որոշ բացառություններով, ճիշտ տարբերակում է կոռուպցիոն դրսևորումները ոչ կոռուպցիոն դրսևորումներից: Այդուհանդերձ, որոշ կոռուպցիոն դրսևորումներ չեն ընկալվում որպես այդպիսիք: Այդ իմաստով, անհրաժեշտ է մշակել արդյունավետ մեխանիզմներ բացահայտելու և կանխարգելելու հովանավորչության, բիզնեսի և պետական պաշտոնի համատեղման և կաշառակերության դրսևորումները պետական պաշտոնատար անձանց շրջանում: Օրինակ, պետական պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ գործարարությամբ զբաղվելը հարցվողների մի մեծ մասը չեն համարում որպես կոռուպցիոն դրսևորում: Ուստի, հատկապես նման կոռուպցիոն դրսևորումների վերհանման կարևորությունը և դրանց նկատմամբ անհանդուրժողականությունը կարևոր է դիտարկել որպես հանրային կրթության և իրազեկման ծրագրերի էական բաղադրիչներ:

Հանրային ընկալումներում առավել կոռումպացված կառույցներն են ԶԼՄ-երը, դատավորները և դատարանները, կուսակցությունները կամ դաշինքները, իսկ ծառայություններից կամ ոլորտներից որպես առավել կոռումպացված են ընկալվում առողջապահությունը, ընտրական գործընթացները և լրատվամիջոցները: Կոռուպցիայի տարածմանը նպաստող առավել հաճախ նշվող գործոններ են հանրության կողմից օրենքներին չհետևելը, օրենքների անկատարությունը և տնտեսական ծանր վիճակը կամ աղքատությունը, իսկ կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթներ՝ խնդիրն օրինական տարբերակով լուծելու անհնարինությունը, օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից խուսափելը և պատժից կամ տուգանքից խուսափելը:

Էական է, որ դառնա համապատասխան մարմինների ուշադրության առարկա կոռուպցիայի կանխարգելումը հանրային ընկալումներում առավել կոռումպացված կառույցներում և ծառայություններում կամ ոլորտներում, մասնավորապես դատական համակարգում, կուսակցությունների գործունեության մեջ, ընտրական համակարգում և առողջապահության ոլորտում: Կրթական և իրազեկման ծրագրերում շեշտը կարող է դրվել քաղաքացիների շրջանում օրինապաշտության մշակույթի ձևավորման և զարգացման վրա: Քաղաքացու գիտակցության մեջ դեռևս արմատավորված չէ այն մտայնությունը, որ աղքատությունը, ծանր տնտեսական վիճակը և այդ վիճակից դուրս գալը («լավ ապրելը») ոչ թե արդարացնում է կոռուպցիոն գործարքներում ներքաշվելը, այլ ընդհակառակը՝ այդպիսի գործարքներում ներքաշվելն էլ ավելի են խորացնում նրանց և նրանց միջավայրի սոցիալական ծանր վիճակը:

Քաղաքացիների ընդամենը 9,4%-ն է տեղյակ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) գործունեության կամ գործառույթների մասին: Կառավարության կողմից իրականացվող գործողություններից կամ նախագծերից միայն տարբեր պետական մարմինների թեժ գծերի մասին է, որ տեղյակ է քաղաքացիների կեսից ավելին, իսկ ամենացածր տեղեկացվածությունը մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների (e-request, e-hotline, e-petition) վերաբերյալ է:

Կոռուպցիայի դեմ պայքարն ավելի արդյունավետ դարձնելու համար կառավարության առաջնահերթություններից կարող են լինել պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումն ու ստուգումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու պատժի անխուսափելիության ապահովումն իրավապահների կողմից և օրենքներում ու կառավարության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը:

Ցանկալի է, որ կրթական և իրազեկման ծրագրերը կամ արշավները քաղաքացիներին ակտիվ կերպով տեղեկացնեն կառավարության կողմից իրականացվող գործողությունների և նախագծերի, այդ թվում՝ մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների մասին տեղեկացնելը:

Ցանկալի է նաև տարբեր հարթակներով, օրինակ սոցիալական գովազդների միջոցով, հանրությանը տեղեկացնել, թե Հայաստանում որ պետական մարմինները և հասարակական կազմակերպություններն են իրականացնում հակակոռուպցիոն գործունեություն, որ դեպքերում և ինչպես դիմել այդ մարմիններին:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2019 2021

Ձեր կարծիքով՝ ներկայումս որքա՞ն մեծ է կոռուպցիայի ազեցությունը Ձեր և Ձեր շրջապատի/համայնքի վրա

Շատ մեծ է

2019 թ. համեմատ 2021-ին ավելի շատ մարդիկ են կարծում, որ կոռուպցիայի ազդեցությունն իրենց կյանքի վրա **շատ մեծ է**:



Աննշան է

2019 թ. համեմատ ավելի մեծ է նաև այն մարդկանց քանակը, որոնց կարծիքով կոռուպցիյի ազդեցությունն իրենց կյանքի վրա **աննշան է**:

Հայաստանում կոռուպցիա չկա

Նվազել է այն մարդկանց քանակը, որոնք կարծում են, որ Հայաստանում կոռուպցիա գոյությունչունի՝ **4,7% - 0,3%**:



Չգիտեմ

2019-ին հարցվածների **7,6%** իսկ 2021թ.-ին հարցվածների **4%**-ը դժվարացել է պատասխանել հարցին

*Համամասնական ներկայացուցչական ընտրանքը ներառել է 18 և բարձր տարիքի **1520** ՀՀ քաղաքացիների **(95% վստահության սահմաններում 2,5% սխալի թույլատրելի շեղումով)** Երևանից և ՀՀ 10 մարզերից:*

Կոռուպցիոն իրավիճակներում անհատական վարքագիծ և փորձառություն

Քաղաքացիների մեծ մասի ընկալմամբ, իրենց վրա կոռուպցիայի ազդեցությունը փոքր է կամ աննշան: Նրանց մեծ մասի կարծիքով կաշառք պահանջելու կամ ակնկալելու դեպքերի թիվը և կաշառքի չափերը ներկայումս նվազել են:

Որպես կոռուպցիայի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներ քաղաքացիները նշել են ԶԼՄ-երը, ընտանիքի անդամներին/ազգականներին/ընկերներին/ծանոթներին և սոցիալական ցանցերը: Կոռուպցիայի մասին տեղեկատվության հավաստիության առումով առավել վստահելի հեռուստաընկերություններ են համարվում Հանրային հե- ռուտաընկերություն (ՀԸ-ն), «Արմենիա» ՀԸ-ն և Շանթ ՀԸ-ն, սակայն բավականին զգալի է ոչ մի հեռուստաընկերության չվստահողների թիվը: ԶԼՄ-երի հետ արդյունավետ համագործակցելու համընդգրկուն և մանրամասն մշակված քաղաքականություն է անհրաժեշտ:

Որպես կաշառք վերցնելու հիմնական շարժառիթներ հարցվողները նշում են ավելի լավ ապրելու ցանկությունը, կաշառքի մի մասն ավելի «վերև» տալու պարտավորությունը և բոլորի կողմից կաշառք տալ կամ վերցնելու արդարացումը, իսկ որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական պատճառ առավել հաճախ նշվել է պատժվելու բարձր ռիսկը: Էական է, որ կրթական և իրազեկման ծրագրերը քաղաքացիների գիտակցության մեջ սերմանեն պատժի անխուսափելիության գաղափարը և արմատավորեն հանրության մեջ կոռուպցիայի, որպես ծանր հանցագործության ընկալումը:

Կոռուպցիայի և հակակոռուպցիոն գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն

Քաղաքացիների մեծ մասը (մոտ 65%-ը) տեղյակ չէ, թե Հայաստանում որ պետական մարմինները և հասարակական կազմակերպություններն են իրականացնում հակակոռուպցիոն գործունեություն: Այդ մարմինների և կազմակերպությունների մասին տեղյակ քաղաքացիներն առավել հաճախ նշել են ոստիկանությունը, ԱԱԾ-ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Շատ ցածր է իրազեկվածությունը դատախազության, այժմ արդեն լուծարված Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի մասին: Էլ ավելի վատ է իրավիճակը հասարակական կազմակերպությունների պարագայում:

Քաղաքացիներն առավել արդյունավետ գնահատել են ոստիկանության հակակոռուպցիոն գործունեությունը: Այնուամենայնիվ, քաղաքացիների մեծ մասը (մոտ 70%) գտնում է, որ տեղեկատվական աջակցության կարիք ունի: Որպես անհրաժեշտ նշվել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը, տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, և պետական մարմինների թեժ գծերի մասին տեղեկատվությունը: Քաղաքացիներին ավելի արդյունավետ տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերով անհրաժեշտ է լայնորեն տարածել քաղաքացիների կողմից կոռուպցիոն իրավիճակներին դիմագրավելիս իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկատվություն, թե այդպիսի իրավիճակներում որ հաստատություններին նրանք կարող են դիմել:

Հակակոռուպցիոն անհատական վարքագիծ և գործողություններ

Ոստիկանությունն այն հիմնական հաստատությունն է, որին քաղաքացիները կդիմեին պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար: Ընդ որում, ՀՀ վարչապետին, որը հարցման արդյունքներով երկրորդն է, կդիմեին մոտ 10 անգամ ավելի քիչ քաղաքացիներ:

Որպես կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու հիմնական պատճառ քաղաքացիները նշում են հասարակության քննադատությանն արժանանալու վախը, ընդ որում՝ մեկ երրորդից ավելին նշել է պատժվելու վախը: Քաղաքացին պետք է տեղյակ լինի նաև, որ այժմ, ոստիկանությունից բացի, կան հակակոռուպցիոն մասնագիտացված մարմիններ, մասնավորապես՝ ԿԿՀ-ն, Հակակոռուպցիոն կոմիտեն: Դրանք էլ ավելի արդյունավետ և հասցեական կառույցներ են, որոնց քաղաքացին կարող է դիմել: Հակակոռուպցիոն կրթական և իրազեկման ծրագրերի գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի հաղթահարել այն մտայնությունը, ըստ որի կոռուպցիայի մասին հայտնելը (ազդարարելը) սոցիալապես պախարակելի երևույթ է:

Քաղաքացիների ավելի քան 47%-ը պատրաստ չէ կամ չի ցանկանում մասնակցել կամ ներգրավվել կոռուպցիան նվազեցնելուն ուղղված որևէ գործողության մեջ: Իսկ նրանք, ովքեր ունեն նման ցանկություն, հիմնականում այդ դերը պատրաստվում են իրականացնել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց խուսափելու միջոցով: Պատկան

մարմիններին կառուպցիայի դեպքերի մասին պատրաստ է հայտնել/ազդարարել քաղաքացիների 10%-ից մի փոքր ավելին:

Որպես հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվելու հիմնական պատճառ քաղաքացիները նշում են այն, որ սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար: Այս պատճառաբանությունը նշած հարցվածների մեծ մասի հիմնավորումն այն է, որ կոռուպցիան Հայաստանում հնարավոր է նվազեցնել միայն մասամբ կամ այն ընդհանրապես հնարավոր չէ նվազեցնել: Պետական համակարգն իր գործելաոճով և բարեվարքությամբ պետք է խթանի քաղաքացիների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարին: Այն նաև առանցքային դեր կխաղա այն հարցում, որ քաղաքացիների մեջ հաղթահարվի « ես փոքր մարդ եմ, որից ոչինչ կախված չէ» մտայնությունը և կվերականգնի շարքային քաղաքացիների հավատը, որ Հայաստանում հնարավոր է նվազեցնել կոռուպցիան, և այդ հարցում պատասխանատու են նաև իրենք՝ քաղաքացիները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում 2018 թվականի ապրիլ-մայիսին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք ընդունված է անվանել թավշյա, ոչ բռնի հեղափոխություն, երկրում լայնածավալ քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ իրականացնելու մեծ հնարավորություններ ստեղծեցին: Մասնավորապես, ուրվագծվեցին իմիտացիոն ժողովրդավարությունից դեպի իրական ժողովրդավարություն, մենաշնորհային և պետության զավթման վրա հիմնված տնտեսական համակարգից դեպի իրական, ազատ մրցակցության վրա հիմնված շուկայական տնտեսություն, սոցիալական ծայրահեղ անհավասարության և անարդարության վրա հիմնված սոցիալական հարաբերություններից դեպի սոցիալական պետություն անցնելու ճանապարհներ:

Այստեղ կոռուպցիան և դրա դեմ պայքարը կենտրոնական դերակատարում են ստանում, քանի որ նշված իրադարձությունների ժամանակ փողոց դուրս եկած հարյուր հազարավոր մարդիկ պաշտպանեցին հեղափոխությունը նաև այն բանի համար, որ հոգնել էին երկրում առկա համակարգային կոռուպցիայից, որն այդ ժամանակ հասել էր երկրի անվտանգությանը սպառնացող վտանգավոր չափերի:

Հասարակության ներսում հստակ գիտակցում կա, որ քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների անցկացումն անհնարին է, եթե կառավարությունը չիրականացնի համընդգրկուն և համակարգային հակակոռուպցիոն քաղաքականություն: Այդպիսի քաղաքականության իրականացումն անհրաժեշտ է, որ երկրի պետական կառավարման համակարգը լինի թափանցիկ և հաշվետու, հասարակական գիտակցությունը լինի անհանդուրժող կոռուպցիոն ցանկացած դրսևորումների նկատմամբ: Էական է, որ պետական կառավարման մեջ որոշումների կայացումը լինի մասնակցային, կանխվի պետական պաշտոնյաների, անկախ զբաղեցրած պաշտոններից, կոռուպցիոն վարքագիծը, իսկ չկանխվելու դեպքում նրանց կատարվծ կոռուպցիոն հանցագործություններն արդյունավետ կերպով բացահայտվեն, հետաքննվեն, և կատարողները չխուսափեն իրենց հասանելիք պատժից: Իրական քաղաքական կամքի առկայության դեպքում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնելուն կնպաստի մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ համակարգը, որի ստեղծումը Հայաստանում կարևորվեց 2019 թվականից՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) ստեղծումով:

Հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության իրականացումը, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի կայացումը, հասարակության կողմից այդ քաղաքականության ճիշտ ընկալումը և դրան աջակցումը հնարավոր չի լինի, եթե ճիշտ չգնահատվի երկրում առկա կոռուպցիայի իրավիճակը, հասարակության կողմից դրա ընկալումները, այդ նույն հասարակության պատրաստակամությունը կամ չկամությունը՝ ներգրավվելու կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև քաղաքացիների իրազեկվածությունը կոռուպցիայի և դրա դեմ պայքարի գործիքների և հաս-

տատությունների վերաբերյալ: Այդ նպատակով և՛ միջազգային, և՛ տեղական մակարդակով պարբերաբար անցկացվում են կոռուպցիայի ընկալման, փորձի, ինչպես նաև այդ երևույթի վերաբերյալ հանրային տեղեկացվածության ուսումնասիրություններ:

Հայաստանում նմանատիպ ուսումնասիրություն անցկացրել են «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամը 2008-2010 թվականներին և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը (հանդիսանում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը Հայատանում) 2002 և 2006 թվականներին: Բացի դրանից, 2019 թվականին ԹԻՀԿ-ի պատվերով և ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ այդպիսի ուսումնասիրություն կրկին իրականացրել է ՀՌԿԿ-Հայաստանը: Ներկայիս ուսումնասիրությունը իրականացվել է Հայաստանի բարեվարքության ծրագրի պատվերով և ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ: Հիմնվելով նախորդ հետազոտությունների վրա՝ այն հանդիսանում է 5 տարվա ընթացքում իրականացվելիք 3 ուսումնասիրություններից առաջինը, որը նախնական պատկեր կստեղծի հանրապետությունում կոռուպցիայի վերաբյալ հանրային կարծիքի մասին: Հաջորդ ուսումնասիրությունները նախատեսվում է իրականացնել 2 տարի և 5 տարի անց: Հետազոտության հարցաթերթի մշակման հիմքում դրված է 2019 թվականին ԹԻՀԿ-ի պատվերով իրականացված հարցման հարցաթերթը, որը լրամշակվել և արդիականացվել է ՀԲԾ, ԿԿՀ և ՀՀ արդարադատության նախարարության փորձագետների մասնակցությամբ:

Տվյալ զեկույցը բաղկացած է չորս հիմնական վերլուծական գլուխներից, ընդհանուր և առանձահատուկ ուշադրության արժանի արդյունքները հակիրճ ներկայացված են համառոտագրում: Հետազոտության իրականացման կարևորության մասին խոսվում է ներածության մեջ, իսկ հետազոտության մեթոդաբանությունը և հարցվածների ընդհանուր ժողովրդագրական բնութագիրը ներկայացված են համապատասխան մեթոդաբանական բաժնում: Զեկույցի առաջին վերլուծական գլուխը (երկրորդ գլուխ) նվիրված է կոռուպցիայի հասարակական ընկալմանը Հայաստանում, որտեղ մասնավորապես անդրադարձ է կատարվում կոռուպցիոն վարքագծի ընդհանուր ընկալումներին, ինչպես նաև դրանց բաշխմանն ըստ ոլորտների և հաստատությունների, տեղեկացվածության աստիճանի: Երրորդ գլուխն անդրադառնում է Հայաստանում կոռուպցիոն իրավիճակին, հատկապես նման իրավիճակներում վարքագծի ընդհանուր ընկալումներին, հիմնական տեղեկատվական աղբյուրներին և կոռուպցիոն եղանակով խնդիրները լուծելու հիմնական դրդապատճառներին: Չորրորդ գլուխը վերաբերում է հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածությանը, մասնավորապես պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածությանը, ինչպես նաև հակակոռուպցիոն նախաձեռնությունների նկատմամբ վստահությանը և դրանց արդյունավետության գնահատմանը: Հինգերորդ գլուխն անդրադառնում է կոռուպցիայի մասին անձնական պատասխանատվության պատկերացումներին՝ անհատական փորձառությանը կոռուպցիոն իրավիճակներում, հակակոռուպցիոն հնա-

ռավոր անհատական գործողություններին և հակակոռուպցիոն անհատական վարքագծի ընկալումներին: Հետազոտության վերլուծական զեկույցին հավելված է հետազոտության հարցաթերթը (տե՛ս Հավելված 1): Հետազոտության տվյալների ներկայացման ենթատեքստում առանձին հատվածներում անդրադարձ է արվում սոցիալական խմբերի՝ ըստ հիմնական ժողովրդագրության տարբերություններին, ինչը ստուգված է համապատասխան վիճակագրական թեստերով: Զեկույցը հատկապես անդրադառնում է հետազոտության շրջանակներում ստացված վիճակագրորեն հավաստի տվյալների: ՀԲԾ կողմից այս հետազոտությանը համընթաց նախաձեռնված կոռուպցիայի ընկալման համաթվի հաշվարկման և ելակետային տվյալների շուրջ համառոտ տեղեկատվություն է տրամադրված զեկույցի համապատասխան բաժիններում: Զեկույցն ինքնին այս տարի չի անդրադառնում համաթվին, քանի որ այն ավելի մանրամասն կներկայացվի Բարեվարքության ծրագրի ավարտին՝ հիմնվելով երեք հարցումների (ելակետային, միջանկյալ և վերջնական) տվյալների վրա:

Զեկույցում իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ թափանցիկ չէ կուսակցությունների/դաշինքների, ԶԼՄ-ների, նախընտրական քարոզարշավի և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը, ինչպես նաև հանրությունը կարիք ունի ԶԼՄ-ների և կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության:

Ազգաբնակչության շրջանում թերահավատություն կա կոռուպցիայի նկատմամբ պայքարի արդյունավետության առումով: Ըստ քաղաքացիների՝ մարդիկ դիմում են կուռուպցիայի, երբ խնդիրը լուծելու այլ՝ օրինական, տարբերակ չկա, կամ նման գործելակերպի շարժառիթը կարող է լինել խուսափելն օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից: Հետազոտությունը ցույց տվեց, որ մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների (անգլ.՝ «e-request», «e-hotline», «e-petition») վերաբերյալ տեղեկացված է հարցվածների միայն 8,9%-ը: Քաղաքացիների 69-73%-ը ընտրական գործընթացների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը կախված է համարում օլիգարխների, բիզնեսի շահերից:

Հակակոռուպցիոն քաղաքականությունը մեծ մասամբ ողջունելի է քաղաքացիների կողմից. հարցվածների շուրջ 80%-ը հավանություն է տալիս կառավարության կողմից արդեն իրականացվող կամ դեռևս քննարկվող հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին:

Ըստ հարցվածների 37,2%-ի՝ կոռուպցիան շատ մեծ (17,4%) և ավելի շուտ մեծ (19,8%) ազդեցություն ունի իրենց և իրենց շրջապատի վրա: Սակայն հարցվածների գրեթե մեկ քառորդը (25,3%) նշել է, որ ազդեցությունն ավելի շուտ փոքր է, իսկ այն ազդեցություն չունի հարցվածների մեկ երրորդի համար (33,2%): Հետաքրքրական է, որ կանայք, երիտասարդները՝ 18-35 տարեկան քաղաքացիները, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները, Երևան քաղաքի բնակիչները, ինչպես նաև 220,000 ՀՀ դրամից ավելի եկամուտ ունեցողները կարծում են, որ կոռուպցիան շատ մեծ/ավելի շուտ մեծ ազդեցություն ունի իրենց շրջապատի/համայնքի վրա:

Էական է ընդգծել ասեկոսեների՝ որպես կոռուպցիայի մասին նշանակալի տե-

ղեկատվական աղբյուրի բարձր տոկոսը (23%), որն ընդամենը մոտ 4%-ով է պակաս, քան նշվել են ԶԼՄ-ները՝ որպես կոռուպցիայի մասին տեղեկանալու աղբյուր: Համեմատության կարգով՝ 2019 թ.-ից էապես աճել է հասարակական կազմակերպությունների միջոցով տեղեկատվության ստացման տարբերակը նշած հարցվածների բաժինը (11,4% 20212 թ.-ին, 3,4%՝ 2019 թ.-ին):

ԶԼՄ-ների՝ որպես կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուրի նկատմամբ վստահության ընդհանուր անկման պայմաններում հարցվածների մեծամասնությունը նշել է, որ ոչ մի (22,8%) լրատվամիջոց ժողովրդականություն չի վայելում կոռուպցիայի մասին հավաստի տեղեկություն ստանալու հարցում:

Հարցվածների մի մասը (40,6%) որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական դրդապատճառ նշել է վախը՝ «քանի որ պատժվելու ռիսկը բարձր է» , մինչդեռ մյուս մասի համար (44%) դա պայմանավորված է մարդկանց բարոյական, արժեքային համակարգով, քանի որ կոռուպցիան բարոյապես ընդունելի չէ կամ հանցագործություն է:

Հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: Միևնույն ժամանակ, հասարակության մեջ մոտ 20%-ով ավելացել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալ ցանկացողների քանակը: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը, տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, պետական մարմինների թեժ գծերի մասին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասին և հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը:

Որքան էլ որ հարցվողները պատրաստ են իրականացնել հակակոռուպցիոն գործունեություն և դրական են տրամադրված նման գործունեության նկատմամբ, նրանց կեսից ավելին (51,1%) չի հայտնի համապատասխան մարմիններին, եթե անձամբ առնչվի կոռուպցիայի հետ: Հարցվողների մեկ երրորդից ավելին (36,6%) նշել է, որ իրենց հետ է պահում պատժվելու վախը, օրինակ՝ աշխատանքից հեռացվելու, «սուտ» մատնության համար պատասխանատվության ենթարկվելու հնարավոր հեռանկարը: Մոտ 27,4%-ը մտավախություն ունի, որ նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի, իսկ գրեթե 13%-ը կարծում է, որ կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ քո շահերին չի առնչվում: Միևնույն ժամանակ, հարցվողների ճնշող մեծամասնությունը (մոտ 90%) նշում է, որ կուռուպցիան կարելի է ապացուցել: Հարցվածների գրեթե կեսը պատրաստ է մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում: Ընդ որում, այդպիսի ցանկություն հայտնել են ավելի շատ գյուղական բնակավայրերում ապրողները, ինչպես նաև 18-35 տարեկան քաղաքացիները:

ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցի մեթոդաբանական մասը համառոտ անդրադառնում է հետազոտության նպատակին, հարցաթերթին, իրականացված հարցման ընտրանքի մեթոդաբանությանը, հետազոտական (դաշտային) աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև հարցվողների ժողովրդագրությանը:

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից իրականացված՝ Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի այս ուսումնասիրությունը համանման հինգերորդն է: Նախորդ հետազոտություններն իրականացվել են 2008, 2009, 2010 և 2019 թվականներին:

Սույն հետազոտության նպատակն է պարզել՝

1. կոռուպցիայի ընկալումը հասարակության կողմից Հայաստանում.
2. կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում.
3. հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակը.
4. կոռուպցիայի մասին անձնական պատասխանատվության պատկերացումները:

Հետազոտությամբ խնդիր է դրվել ստանալու ՀՀ-ում կոռուպցիայի կանխարգելմանը միտված տեղեկատվություն, որոնք կնպաստեն հասկանալ կոռուպցիային վերաբերող խնդիրներն ու մշակել այնպիսի ծրագրեր, որոնք կօգնեն կոռուպցիայի կանխարգելման ինստիտուտների և բարեվարքության համակարգերի ամրապնդմանը, իրականացնել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված իրավական-կարգավորիչ միջոցառումներ և աջակցել հակակոռուպցիոն կրթական ծրագրերի, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի, արշավների մշակմանը և իրականացմանը:

1.1. Հետազոտության հարցաթերթը

Հետազոտության հարցաթերթը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստանի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ՀԲԾ, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների փորձագիտական աջակցությամբ՝ հիմք ընդունելով ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում ՀՌԿԿ-Հայաստանի կողմից իրականացված նախորդ հետազոտության հարցաթերթը (ՀՌԿԿ-Հայաստան, 2019), ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող ներկայիս զարգացումները: Այն կազմված է հետևյալ բաժիններից՝

- Հայաստանում կոռուպցիայի հասարակական ընկալումը.
- Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում.
- Հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածությունը.
- Ժողովրդագրություն:

Ամբողջական հարցաթերթը ներկայացված է Հավելված 1-ում: Զեկույցում ներկայացված վերլուծությունը թեմատիկ իմաստով հիմնականում համապատասխանում է հարցաթերթի կառուցվածքին:

1.2. Ընտրանքի մեթոդաբանությունը

Համամասնական ներկայացուցչական ընտրանքի մեջ ներգրավված են եղել 18 և բարձր տարիքի 1520 ՀՀ քաղաքացիներ (95% վստահության սահմաններում 2,5% սխալի թույլատրելի շեղումով) Երևանից և ՀՀ տասը (10) մարզերից: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել են տնային տնտեսությունների մարզային բաշխվածության վերաբերյալ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները (տե՛ս ստորև բերված Աղյուսակ 1-ը): Որպես դաշտային աշխատանքների իրականացման ելակետ օգտագործվել են ընտրատեղամասերի հասցեները: Ստորև ներկայացված են ընտրանքի ձևավորման փուլերը:

Առաջին փուլ. համամասնական ստրատիֆիկացիա բնակչության չափով՝ ըստ վարչական միավորների՝ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն:

Երկրորդ փուլ. համամասնական ստրատիֆիկացիա՝ ըստ ՀՀ մարզերի և բնակավայրի տիպի (մայրաքաղաք/այլ քաղաքային/գյուղական):

Երրորդ փուլ. առաջնային ընտրանքային միավորների (քլաստերների) պատահական ընտրություն յուրաքանչյուր քաղաքային/գյուղական ստրատայում:

Չորրորդ փուլ. յուրաքանչյուր քլաստերում քաղաքային/գյուղական ստրատայով տնային տնտեսությունների ընտրություն պատահականության սկզբունքով պարբերական քայլի մեթոդով (այցելվել է քլաստերի ամեն չորրորդ (4-րդ) տնային տնտեսությունը, տասը (10) SS քաղաքային և ութը (8) SS գյուղական բնակավայրերում):

Հինգերորդ փուլ. տնային տնտեսությունում չափահասների թվում հարցվողի պատահական ընտրությունն իրականացվել է վերջին ծննդյան օրվա մեթոդով:

Ստորև աղյուսակ 1-ը ներկայացնում է ընտրանքի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի տիպի:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի տիպի									
	Չափահաս բնակչություն		Մասնաբաժինը		Ընտրանքի չափը, SS		Ընտրված քլաստերների թիվը		
Մարզ	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Քաղաք.	Գյուղ.	Ընդհանուր
Երևան	837423		37.1%	0.0%	557	0	56	0	56
Արագածոտն	19562	73538	0.9%	3.3%	13	49	1	6	7
Արարատ	52974	139949	2.3%	6.2%	35	93	4	11	15
Արմավիր	61660	139182	2.7%	6.2%	41	93	4	11	15
Գեղարքունիք	50148	121835	2.2%	5.4%	33	81	3	10	13
Լոռի	95249	64707	4.2%	2.9%	63	43	7	5	12
Կոտայք	100908	86898	4.5%	3.9%	67	58	7	7	14
Շիրակ	103480	70304	4.6%	3.1%	69	47	7	6	13
Սյունիք	74008	34093	3.3%	1.5%	49	23	5	3	8
Վայոց Ձոր	13072	24358	0.6%	1.1%	9	16	1	2	3
Տավուշ	39734	53456	1.8%	2.4%	26	36	3	4	7
Ընդհանուր	**1448218**	**808320**	**64.2%**	**35.8%**	**963**	**537**	**98**	**65**	**163**

Աղբյուրը. ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները 2021 հունվարի 1-ի դրությամբ:

Պատահականորեն ընտրված տնային տնտեսություններում կիրառվել է սեռի և տարիքի քվոտա՝ հիմնվելով տվյալների մշտադիտարկման վրա, ազգային վիճակագրության հետ հարցումների բաշխման համապատասխանությունը պահպանելու համար: Փաստացի իրականացվել է 1520 հարցազրույց:

1.3. Դաշտային աշխատանքներ

Հարցումներն իրականացվել են 2021թ. հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում ՀՌԿԿ-Հայաստանի 37 փորձառու հարցազրուցավարների կողմից, որոնք դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով՝ (“CAPI”) համակարգով գործող դյուրակիր սարքերով իրականացրել են հարցումները: Հարցազրույցների միջին տևողությունը եղել է 35 րոպե: Հարցումների համար կատարվել է 6143 այց, որոնց 27 տոկոսն ավարտվել է հարցմամբ: Հարցմանը մասնակցելուց հրաժարվել են 2469 տնային տնտեսություններում (41%), 1299 տնային տնտեսությունների (21%) դռները փակ են եղել, և հարցազրուցավարնե-

որը չեն կարողացել կապ հաստատել տվյալ ՏՏ որևէ անդամի հետ: Որոշ ՏՏ-ներ համավարակի պատճառով եղել են ինքնամեկուսացած, որոշներում բացակայել են չափահասները, հարցվողները չեն տիրապետել հարցազրույցի լեզվին և այլն: Նման դեպքերում ՏՏ-ները փոխարինվել են ըստ ընտրանքային ցուցումների:

1.4. Հարցվածների ընդհանուր բնութագիրը, ընտրանքի նկարագրությունը

Կանայք ընտրանքում կազմել են 55,5%, իսկ տղամարդիկ՝ 44,5%: Ընտրանքում համեմատաբար մեծ է եղել 18-35 տարեկան հարցվածների թիվը (30,3%), համեմատաբար փոքր կենսաթոշակառուներինը՝ 16,4%: Նշված բաշխումը համապատասխանում է ազգային վիճակագրությանը (հաշվի առնելով մինչև 5% սխալի հավանականությունը, տե՛ս ՎԿ, Աշխատուժի հետազոտություն, 2019 և ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021): Նշված բաշխման մոտ լինելը ազգային ժողովրդագրությանը նաև տվյալների ընթացիկ ստուգման և քվոտավորման արդյունք է:

Հարցվածների մեծամասնությունն ունեցել է միջնակարգ կրթություն՝ 36,2% (ըստ ՎԿ-ի աշխատուժի հետազոտության (2021) այս տոկոսը կազմել է 43%): Հարցվածների մեծամասնությունը (շուրջ 70%-ը) ամուսնացած է եղել: Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ շուրջ 80%-ը, ունեցել է երեխաներ:

Հարցվածների մեջ գերակշռել են լրիվ դրույքով աշխատող անձինք (32,9%), համեմատաբար ավելի քիչ տոկոս են կազմել տնային տնտեսուհիներն ու կենսաթոշակառուները (20,9% և 17,9%, համապատասխանաբար):

Հարցվածների ներկայիս աշխատանքային կարգավիճակն ըստ բնակավայրի տեսակի դիտարկելիս գրեթե հավասարաչափ բաշխում կա թե՛ մայրաքաղաք Երևանում, թե՛ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կուռուպցիոն վարքագծի ընդհանուր ընկալումները հարցման շրջանակներում վերհանվել են մի շարք հարցադրումների միջոցով: Հարցվողներին ներկայացվել են կոռուպցիոն գործողություններ և կոռուպցիայի դրսևորման ձևեր ներկայացնող ցուցակներ, որոնցում նրանք գնահատել են այդ գործողությունների կոռուպցիոն լինելը կամ կոռուպցիոն դրսևորումների տարածվածությունը: Ստորև ենթագլուխներն անդրադառնում են կոռուպցիոն վարքագծի ընդհանուր ընկալումներին ըստ կոռուպցիոն գործողությունների, դրսևորումների, ոլորտների և հաստատությունների: Այստեղ և զեկույցի հաջորդ վերլուծական բաժիններում առանձին դեպքերում համեմատություններ են արված 2019 թ.-ին, ինչպես նաև (ըստ անհրաժեշտության) ավելի վաղ իրականացված հարցման տվյալների և այս հետազոտությամբ ստացված տվյալների միջև:

2.1. Կուռուպցիոն գործողությունների ընկալումը

Հարցվածների պատկերացումները կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ բավականաչափ հստակ են, բացառությամբ որոշ դեպքերի, որոնց պարագայում իրազեկման խնդիր կա. մասնավորապես, հանրությանը վերաբերող գործողությունների կամ նվիրատվությունների պարագայում հստակ է, որ հանրային իրազեկման խնդիր կա, որ հանրությունը տեղյակ լինի կոռուպցիայի և կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործողությունների մասին (տե՛ս գծապատկերներ 1ա և 1բ):

Ստորև ներկայացված առանձին պարբերություններում քննարկվում են ժողովրդագրական խմբերի կողմից կոռուպցիայի և դրա ռիսկ ներկայացնող այս կամ այն դրսևորումը այդպիսին համարելու չափերը: Համեմատաբար ավելի քիչ թվով՝ մինչև 32% մարդիկ են կոռուպցիա համարել գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումը, ինչն ինքնին կոռուպցիա չէ, բայց կարող է նման ռիսկ պարունակել, եթե, օրինակ, նախընտրական հանդիպումների անցկացումը հասանելի լինի սահմանափակ քաղաքական ուժերի: Նույն կերպ, գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումները (սա կուռուպցիա չէ, բայց կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր) համեմատաբար ավելի քիչ մարդ է համարում կոռուպցիա (26%):

Ավելացել է այն մարդկանց քանակը, որոնք գործարարների կողմից կուսակցություններին/դաշինքներին նախընտրական քարոզարշավի համար արվող նվիրատվությունները համարում են կոռուպցիոն վարքագիծ. 2019 թ.-ին սա կոռուպցիայի դրսևորում է համարել հարցվածների 68%-ը, իսկ այժմ այդ նույն կարծիքն ունի հարցվածների գրեթե 73%-ը: Այս վարքագիծը թեև պարունակում է բարձր կոռուպցիոն ռիսկ, բայց կոռուպցիայի դրսևորում չէ: Նմանապես գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումները պարունակում են կոռուպցիոն ռիսկ, բայց կոռուպցիայի դրոևորում չեն. սա կոռուպցիայի դրսևորում է համարում հարցվածների մոտ 26%-ը, ինչը 7%-ով պակաս է 2019թ.-ին նույն կարծիքը հայտնածներից:

Գծապատկեր 1ա: Որքանո՞վ եք համաձայն, որ այս գործողությունները կոռուպցիայի դրսևորումներ են: Բարձր կոռուպցիոն ռիսկի մասին ընկալումներ:



Համեմատած 2019 թ տվյալների հետ՝ ավելացել է այն մարդկանց քանակը, որոնք անձ-պետական պաշտոնատար անձի կողմից ծառայողական ավտոմեքենայի անձնական նպատակներով օգտագործումը կոռուպցիայի դրսևորում է համարում. 2019թ.-ին սա կոռուպցիայի դրսևորում են համարել քաղաքացիների 58%-ը, իսկ այժմ այդ նույն տեսակետն ունի քաղաքացիների 65%-ը: Ավելի քիչ մարդիկ են համարել (հարցվածների 26%-ը), որ ուշադիր վերաբերմունքի համար բժշկին, ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը կոռուպցիայի դրսևորում է. մինչդեռ նշված երկու վարքագծերն էլ կոռուպցիայի դրսևորումներ են:

Ստորև ներկայացված դրսևորումների հետ կապված հանրային կարծիքը 2019 թ.-ից հետո գրեթե փոփոխության չի ենթարկվել: Բանկում գրավադրված գույքի առգրավումը բանկի կողմից վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում կոռուպցիայի դրսևորում է որակել հարցվածների 23%-ը, մինչդեռ սա կոռուպցիոն դրսևորում չէ:

Գծապատկեր 1բ: Որքանո՞վ եք համաձայն, որ այս գործողությունները կոռուպցիայի դրսևորումներ են: Կոռուցիայի վերաբերյալ ընկալումներ



Պետական գնումներով կնքված պայմանագրի գումարի մի մասը գործարքը սատարած պաշտոնյային թողնելը կոռուպցիայի դրսևորում է համարել հարցվածների 83,2%-ը: Սա կոռուպցիայի դրսևորում է:

Պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալը (բարձր կոռուպցիոն ռիսկ պարունակող դրսևորում) կոռուպցիայի դրսևորում է համարել հարցվածների 60%-ը, ինչը կարող է վկայել այն մասին, որ հանրության մեծ մասի համար տեսանելի չեն այն չափանիշները, որոնց հիման վրա տրվում են այդ պարգևավճարները:

Որոշ սոցիալական խմբերի միջև տեսակետները տարբերվում են ըստ սեռի, տարիքային խմբի, կրթական մակարդակի, բնակավայրի և եկամտի չափի: Մասնավորապես.

- պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ ինստիտուտի (կառույցի) կողմից անգործությունը կամ ոչ պատշաճ աշխատանքը կոռուպցիայի դրսևորում ընդհանրապես չեն համարել առավելապես արական սեռի ներկայացուցիչները, հիմնականում Երևանի բնակիչները.
- պետական պաշտոն զբաղեցնող անձին գումար առաջարկելն իր օգտին որոշում, գործողություններ կատարելու կամ չկատարելու համար առավել շատ կոռուպցիայի դրսևորում ընդհանրապես չեն համարել ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները,առավելապես գյուղական բնակավայրերի բնակիչները, միջինում ամսական 220,000 ՀՀ դրամից ավելի ֆինանսական եկամուտ ունեցողները.
- գործարարների կողմից կուսակցություններին/դաշինքներին նախընտրական քարոզարշավի համար կատարվող նվիրատվությունները կոռուպցիայի դրսևորում ընդհանրապես չեն համարել ավելի շատ Երևանի բնակիչները.
- պետական պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ գործարարությամբ զբաղվելը ընդհանրապես կոռուպցիա չեն համարել հիմնականում կանայք, առավելապես 18-35 տարեկան քաղաքացիները, հիմնականում Երևանի բնակիչները.
- քաղաքացու քվեն ստանալու նպատակով թեկնածուի կողմից որևէ ապրանք կամ ծառայություն խոստանալը (օր.՝ անվճար վիրահատություն կազմակերպելը) ընդհանրապես կոռուպցիոն երևույթ չեն համարել հիմնականում գյուղաբնակները, մինչև 148,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող քաղաքացիները.
- ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների օրը շահադիտական նպատակով հանձնաժողովի անդամներին սննդով ապահովելը ընդհանրապես համաձայն չեն կոռուպցիա համարել առավել շատ Երևանում, քան այլ քաղաքներում ապրող քաղաքացիները.
- գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումն ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիա դիտարկել հիմնականում Երևանում և գյուղական բնակավայրերում ապրող անձինք.
- գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումներն ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիա դիտարկել առավելա-

պես Երևանի բնակիչները, նախնական/միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթությամբ անձինք.

- պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալն ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիա դիտարկել առավել շատ Երևանում ապրող քաղաքացիները.
- բանկում գրավադրված գույքի առգրավումը բանկի կողմից վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում լիովին համաձայն են[1] որպես կոռուպցիա դիտարկել հիմնականում 65-ից բարձր տարիքի քաղաքացիները, առավելապես ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթությամբ անձինք, հիմնականում Երևանում բնակվողները.
- պետական պաշտոնատար անձի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումն անձնական նպատակներով ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիոն երևույթ դիտարկել առավելապես 18-50 տարեկան անձինք.
- պետական գնումներով կնքված պայմանագրի գումարի մի մասը թողնելը գործարքը սատարած պաշտոնյային ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիոն երևույթ դիտարկել հիմնականում տղամարդիկ, առավել շատ 18-35 տարեկան քաղաքացիները, հիմնականում ոչ լրիվ և լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները, առավել շատ գյուղական բնակավայրերում ապրողները, առավելապես մինչև 91,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցողները.
- բժշկին, ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալն ուշադիր վերաբերմունքի համար ընդհանրապես համաձայն չեն որպես կոռուպցիոն երևույթ դիտարկել հիմնականում Երևանի բնակիչները:

2.2. Կոռուպցիայի դրսևորման ձևերի ընկալումը

Կոռուպցիայի դրսևորման ձևերի առավել տարածվածությունը դիտարկելիս հարցվածների 82%-ը տարածված է համարել հովանավորչությունը: Հարցվածները բիզնեսի և պետական պաշտոնի համատեղումը (գրեթե 77%-ը) և կաշառակերությունը (շուրջ 75%-ը) համարել են կուռուպցիայի տարածված դրսևորումներ (տե՛ս Գծապատկեր 2): Հարցվածների 60%-ից ավելին տարածված է համարել փողերի լվացումը (66,2%), պետական բյուջեի մսխումը կամ յուրացումը (64,9%) և պետական դրամաշնորհների տրամադրման ոչ թափանցիկ գործընթացը (61%):

Կոռուպցիայի դրսևորման ձևերի ընկալումները տարբերվում են ըստ մի շարք սոցիալ-ժողովրդագրական խմբերի: Մասնավորապես, պետական բյուջեի մսխումը կամ յուրացումը չափազանց/ավելի շուտ տարածված համարողների թիվն ավելի է կանանց (n=563, 66,7%), ինչպես նաև Երևանում (n=381, 66,1%) և այլ քաղաքային վայրերում (n=294, 69%) բնակվողների շրջանում: Երևանում (n=408, 70,9%) և այլ քաղաքային բնակավայրերում ավելի շատ

1. Նշված տարբերակը չի համարվում կոռուպցիա, այդ իսկ պատճառով ներկայացվում է այն կոռուպցիա համարողների ժողովրդագրական նկարագիրը:

թվով մարդիկ (n=286, 60,2%) են փողերի լվացումը համարում չափազանց/ավելի շուտ տարածված: Տասնութից երեսունհինգ (18-35) տարեկան քաղաքացիները (n=306, 66.5%), ինչպես նաև այլ քաղաքային վայրերում (n=288, 55,6%) բնակվող քաղաքացիները գնումների դեպքում «օտկատների» կամ մաղարիչի բաշխումը համարում են չափազանց/ավելի շուտ տարածված:

Գծապատկեր 2: Հայաստանում ներկայումս որքանո՞վ են տարածված կոռուպցիայի հետեւյալ դրսեւորումները (%)



Ընդհանուր առմամբ, ըստ հարցվածների, թափանցիկ չէ կուսակցությունների/դաշինքների, ՁԼՄ-ների, նախընտրական քարոզարշավի և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը (տե՛ս գծապատկեր 3): Երեսունվեցից (36-ից) բարձր տարիք ունեցող քաղաքացիների 79-81%-ը կուսակցությունների կամ դաշինքների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը գնահատում է ոչ թափանցիկ, մինչդեռ նույն կարծիքն ունի երիտասարդների 72%-ը: Քաղաքացիների 76-77%-ը, անկախ բնակավայրից ոչ բավարար թափանցիկ կամ ընդհանրապես ոչ թափանցիկ է ընկալում ՁԼՄ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը: Քաղաքացիների 69-73%-ը ընտրական գործընթացների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը համարում է ոչ բավարար թափանցիկ կամ ընդհանրապես ոչ թափանցիկ: Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությանը, ապա 51-ից բարձր տարիքի քաղաքացիների 74-75%-ն այն գնահատում է ոչ թափանցիկ, մինչդեռ երիտասարդների 61%-ն է այդ կարծիքին:

Գծապատկեր 3. Ձեր կարծիքով որքանո՞վ է ներքոհիշյալ կառույցների կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ ինֆորմացիան բաց/թափանցիկ (հայտնի) (%)



Անկախ սոցիալ-ժողովրդագրական տվյալներից՝ հարցվածների մեծամասնությունը գտնում է, որ քաղաքական կուսակցությունների և պետական պաշտոնյաների շահերը կախված են օլիգարխների, բիզնեսի շահերից (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Ձեր կարծիքով, որքանո՞վ են հետեւյալ մարմինների պաշտոնյաների շահերը կախվածօլիգարխների, բիզնեսի շահերից (%)



Ընդհանուր առմամբ, ազգաբնակչության շրջանում թերահավատություն կա կոռուպցիայի դեմ, պայքարի արդյունավետության առումով: Հայաստանում կոռուպցիայի առկայությունը փաստողների (հարցվածների 98,8%-ը) շուրջ մեկ հինգերորդը համարում է, որ այն ընդհանրապես չի կարող նվազեցվել, ինչը գրեթե հինգ անգամ գերազանցում է երկու տարի առաջ նույն պատասխանը տվածների թիվը (%) (տե՛ս Գծապատկեր 5): Միևնույն ժամանակ, գրեթե երկու անգամ նվազել է լավատեսների բաժինը (43,8%), որոնք համոզմունք են հայտնել, որ կոռուպցիան հնարավոր է էականորեն նվազեցնել: Հիմնականում կանայք (n=567), 65-ից բարձր տարիքի քաղաքացիները (n=164), նախնական, միջին մասնագիտական և թերի բարձրագույն (n=289) կրթություն ունեցողները, ինչպես նաև 148,000 - 220,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող (n=187) խմբերն են համարում, որ կոռուպցիան ընդհանրապես չի կարող նվազեցվել/կարող է նվազեցվել միայն մասամբ:

Գծապատկեր 5. Որքանո՞վ է հնարավոր նվազեցնել կոռուպցիան Հայաստանում (%)



2.3. Կոռուպցիոն վարքագծի ընկալումներն ըստ ոլորտների և հաստատությունների

Տարբեր անձանց կամ հաստատությունների կոռուպցիոն վարքագծի ընկալումները դիտարկելիս և 2019 թ. արդյունքների հետ համեմատելիս նկատելի է, որ պատկերը, ընդհանուր առմամբ, վատթարացել է (տե՛ս Գծապատկեր 6): Սա հնարավոր է, որ պայմանավորված է ընդհանուր առմամբ հեղափոխությունից հետո չարդարացված սպասումների և հասարակական վերաբերմունքի փոփոխությամբ, ինչպես նաև հետպատերազմյան ապատիայի: Օրինակ՝ «Կովկասյան Բարոմետրը»[2] (2021) ցույց տվեց, որ վստահությունը կառավարության և հանրային ինստիտուտների նկատմամբ նվազել է. Ազգային Ժողովի նկատմամբ վստահությունը նվազել է 2019 թ. 30%-ից դառնալով 16%՝ 2020-ին, վարչապետի նկատմամբ վստահությունը 71%-ից դարձել է 14%, նախագահի նկատմամբ վստահութ-

2. ՀՌԿԿ-Հայաստան (2021): Կավկասյան Բարոմետր: Առցանց: Հասանելի է՝ https://www.crrc.am/barometer/: Վերջին դիտումը 27.09.2022:

Գծապատկեր 6. Տարբեր անձանց/ հաստատությունների կոռումպացված լինելու վերաբերյալ ընկալումները (%)



Գծապատկեր 7. Տարբեր ծառայությունների եւ ոլորտների կոռումպացվածության վերաբերյալ ընկալումները (%)

յունը՝ 78%-ից 31%, դատարանների նկատմամբ՝ 22%-ից 17%, ոստիկանության նկատմամբ՝ 51%-ից 22%, իսկ ԶԼՄ-ները դարձել են ամենաքիչ վստահելի ինստիտուտը (29%-ից 3%): Այսպես, օրինակ, նախկինում (2019) մարդկանց 12%-ն էր կարծում, որ դատարաններն ու դատախազությունը մեծապես կոռումպացված են, իսկ այժմ նույն տեսակետն ունի հարցվածների 32,5%-ը: Նույն պատկերն է ԶԼՄ-ների և Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ հարցվածների արտահայտած կարծիքներում: Մինչ 2010թ. հետազոտական արդյունքներում ԶԼՄ-ներն ու Հայ առաքելական եկեղեցին չեն բնութագրվել որպես կոռումպացված կառույցներ, իսկ 2019 թ.-ից սկսած վերջիններս հանրության կողմից դիտարկվում են որպես կոռումպացված կառույցներ: Մոտ 29%-ը 2019 թ.-ին և 51%-ը 2021 թ.-ին կոռումպացված են համարել Հայ առաքելական եկեղեցին, իսկ մոտ 43%-ը 2019 թ.-ին և 69%-ը 2021 թ.-ին՝ ԶԼՄ-ները:

Հետաքրքրական է, որ, եթե 2019 թ.-ին հարցվածների 75%-ը համարում էր, որ ՀՀ վարչապետը և նրա աշխատակազմը բնավ կոռումպացված չեն, ապա այժմ այդ նույն կարծիքն ունի հարցվածների միայն մեկ երրորդը (34%):

Կոռումպացվածության ամենացածր վարկանիշն ունի Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը): Հարցվածների գրեթե 52%-ը կարծում է, որ վերջինս կոռումպացված չէ, ինչն էականորեն ավելին է 2019 թ. համեմատ (նախկինում 36%-ն էր այդ կարծիքին):

Ինչ վերաբերում է ծառայությունների և ոլորտների կոռումպացվածությանը, ապա հարցվածների մոտ 55%-ը կոռուպցիան տարածված է համարել առողջապահության ոլորտում (տե՛ս Գծապատկեր 7): Կոռումպացված լինելու տեսանկյունից, ըստ քաղաքացիների, երկրորդ տեղում է լրատվությունը (22,6%), ապա ընտրական գործընթացները (21,4%) (ընտրահանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթիկների հաշվարկ և այլն): Հարցվածների մոտ 76%-ը համարել է, որ կոռուպցիան տարածված չէ կապի ոլորտում (հեռախոսակապ, ինտերնետ տրամադրողներ և այլն), մոտ 73%-ը՝ կոմունալ ծառայություններում (ջուր, գազ, էլեկտրաէներգիա), իսկ 50%-ից ավելին՝ համայնքային ծառայություններում (աղբահանություն, հողհատկացում և այլն):

Հարցվածների ընկալմամբ կոռուպցիայի տարածմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են հանրության կողմից օրենքներին չհետևելը (16%), օրենքների անկատարությունը (15%), տնտեսական ծանր վիճակը/աղքատությունը (14%) և պետության կողմից օրենքների կիրառումը չապահովելը (14%) (տե՛ս Գծապատկեր 8):

Ի պատասխան այն հարցի, թե որը կլինի կաշառք տվողի կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթը, հարցվածների 45%-ից ավելին նշել է, որ խնդիրը լուծելու այլ՝ օրինական, տարբերակ չկա, կամ նման գործելակերպի շարժառիթը կարող է լինել խուսափելն օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից (մոտ 43%), ինչպես նաև խուսափելը պատժից/տուգանքից/ այլ պատասխանատվությունից (34,3%) (տե՛ս Գծապատկեր 9):

Գծապատկեր 8. Կոռուպցիայի տարածմանը նպաստ գործոնները (%)



Գծապատկեր 9. Կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթը (%)



2.4. Կոռուպցիոն վարքագծի ընկալումներն ըստ տեղեկացվածության աստիճանի

Հարցման շրջանակներում կոռուպցիայի տարածումը կանխարգելելուն ուղղված տեղեկատվական հարթակների և կառույցների գործունեության մասին տվյալները ցույց են տվել, որ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին տեղյակ է (լսել է կառույցի մասին) 49% հարցված, որոնց միայն 9,4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/գործառույթների մասին: ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատանքն արդյունավետ է գնահատել կառույցի գործունեությանը տեղյակ հարցվածների (n=143) գրեթե 51%-ը (տե՛ս Գծապատկեր 10): Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող կառույցների շարքում (առանց զրուցավարների կողմից կառույցների անվանումներ բարձրաձայնելու) ԿԿՀ-ն 2019 թ.-ին նշել է 1.1 % հարցված, մինչդեռ 2021 թ.-ին՝ 8.4 %[3]:

Գծապատկեր 10. ՀՀԿոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին տեղեկացվածությունը եւ արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում (%)



Պատկերը նույնանման է կառավարության կողմից իրականացված/ող տարբեր գործողությունների կամ նախագծերի դեպքում (տե՛ս Գծապատկեր 11): Այսպես, օրինակ, մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների (անգլ.՝ «e-request», «e-hotline», «e-petition») վերաբերյալ տեղեկացված է հարցվածների 8,9%-ը, «բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը՝ գրեթե 13%-ը: Հարցվածների մեծամասնությունը՝ 57,3%-ն է տեղյակ տարբեր պետական մարմինների թեժ գծերի մասին, 29,9%-ը՝ ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման հարթակի մասին, ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության մասին՝ (31,3%)-ը, Հանրային ծառայությունների միասնական գրասենյակների մասին՝ (31,2%-ը):

3. 2019 թ.-ին հարցվողներին չի տրվել առանձին ճշգրտող հարց ԿԿՀ գործունեության/գործառույթների վերաբերյալ:

Գծապատկեր 11. ՀՀ կառավարության կողմից իրականացված գործողությունների/ նախագծերի մասին տեղեկացվածությունը (%)



Հարցվածների շուրջ 80%-ը հավանություն է տալիս արդեն իրականացվող կամ դեռևս քննարկվող օրենքի կարգավիճակում գտնվող կառավարության հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին (տե՛ս Գծապատկեր 12):

Գծապատկեր 12. Հակակոռուպցիոն նախաձեռնություններին հավանություն տալը (%)



Կոռուպցիայի դեմ Կառավարության պայքարը գնահատելու հարցում հարցվածները, ընդհանուր առմամբ, բաժանվում են երկու խմբի՝ 50,9%-ն այն արդյունավետ է համարում, 45,8%-ը՝ անարդյունավետ (տե՛ս Գծապատկեր 13): Կառավարության կողմից պայքարն անարդյունավետ գնահատածների 41,1%-ը համարում է, որ Հայաստանի ներկայիս կառավարությունն անկեղծ չէ կոռուպցիայի դեմ պայքարի հարցում (տե՛ս Գծապատկեր 14): Այդուհանդերձ, նշված տվյալները ոչ թե կապված են քաղաքացիների տեղեկացվածության աստիճանի հետ, այլ արտահայտում են նրանց ընդհանուր վերաբերմունքը կառավարության նկատմամբ:

Գծապատկեր 13. ՀՀ ներկայիս Կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը (%)



Արդյունավետ է | Արդյունավետ չէ | ԴՊ

Գծապատկեր 14. ՀՀ ներկայիս Կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի անկեղծությունը (%)



Անկեղծ է | Անկեղծ չէ | ԴՊ

Առկա իրավիճակը բարելավելու համար հարցվածները նշել են այն ուղղությունները, որոնց վրա ՀՀ կառավարությունը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի: Դրանց թվում են պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումն ու ստուգումը (45,4%), կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու պատժի անխուսափելիության ապահովումն իրավապահների կողմից (32,2%), ինչպես նաև օրենքներում ու կառավարության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը (26,7%) և այլն:

Գլուխ 2-ում ներկայացված վերլուծությունը ցույց տվեց, որ թափանցիկ չէ կուսակցությունների/դաշինքների, ԶԼՄ-ների, նախընտրական քարոզարշավի և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը, ինչպես նաև հանրությունը կարիք ունի ԶԼՄ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության: Քաղաքացիների 69-73%-ը գտնում է, որ ընտրական գործընթացների ֆինանսավորման աղբյուրները կախված են օլիգարխների, բիզնեսի շահերից: Իրենք կարիք ունեն տեղեկանալու նաև կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրների մասին: Ընդհանուր առմամբ, ազգաբնակչության շրջանում թերահավատություն կա կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության առումով: Ըստ քաղաքացիների, մար-

դիկ դիմում են կուռուպցիայի, երբ խնդիրը լուծելու այլ՝ օրինական, տարբերակ չկա, կամ նման գործելակերպի շարժառիթը կարող է լինել խուսափելն օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից: Հետազոտությունը ցույց է տալիս, որ մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքների (անգլ.՝ «e-request», «e-hotline», «e-petition») վերաբերյալ տեղեկացված է հարցվածների միայն 8,9%-ը: Ընդհանուր առմամբ, իրականացված հակակոռուպցիոն քաղաքականությունը ողջունելի է քաղաքացիների կողմից՝ հարցվածների շուրջ 80%-ը հավանություն է տալիս արդեն իրականացվող կամ դեռևս քննարկվող օրենքի կարգավիճակում գտնվող կառավարության հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին:

ԳԼՈՒԽ 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Զեկույցի այս մասում ներկայացվում է քաղաքացիների գնահատականը, թե որքան է կոռուպցիան ազդում իրենց և իրենց միջավայրի վրա, որոնք են կոռուպցիայի մասին հիմնական տեղեկատվական աղբյուրները, որքանով են դրանք վստահելի և որոնք են կոռուպցիոն եղանակով խնդիրները լուծելու հիմնական դրդապատճառները:

3.1. Կոռուպցիայի ազդեցությունը քաղաքացիների վրա

Ըստ հարցվածների 37,2%-ի (Գծապատկեր 15)՝ կոռուպցիան շատ մեծ (17,4%) և ավելի շուտ մեծ (19,8%) ազդեցություն ունի իրենց և իրենց շրջապատի վրա: Հարցվածների գրեթե մեկ քառորդը (25,3%) նշել է, որ ազդեցությունն ավելի շուտ փոքր է, իսկ ազդեցություն չունի՝ հարցվածների մեկ երրորդի համար (33,2%): Հետաքրքրական է, որ այս հարցին պատասխանող քաղաքացիների միջև առկա է նշանակալի տարբերություն կախված ժողովրդագրությունից. կանայք (n=341), 18-35 տարեկան քաղքացիները (n=191), բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները (n=207), Երևան քաղաքի բնակիչները (n=246), ինչպես նաև 220.000 ՀՀ դրամից ավելի եկամուտ ունեցողները (n=111) կարծում են, որ կոռուպցիան շատ մեծ/ավելի շուտ մեծ ազդեցություն ունի իրենց շրջապատի/համայնքի վրա:

Գծապատկեր 15. Կոռուպցիայի ազդեցությունը Ձեր եւ Ձեր շրջապատի վրա



Նախորդ (2019 թ.) հարցման արդյունքները ցույց են տվել, որ 2018թ. ապրիլ-մայիս ամիսներից հետո պետական պաշտոնյաների կողմից կաշառք պահանջելու/ակնկալելու դեպքերի ու պահանջվող/ակնկալվող չափի հաճախականություններն էականորեն նվազել էին հարցվածների 30,8%-ի ընկալմամբ, իսկ որոշ չափով նվազել՝ 51,6%-ի ընկալմամբ: 2019 թ.-ի և 2021 թ.-ի համար գծապատկերներ 16 և 17-ը դիտարկելիս տեսնում ենք, որ ըստ քաղաքացիների՝ առկա է պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի դեպքերի հաճախականության և չափի վերաբերյալ ընկալումների փոփոխություն: Մարդկանց թիվը, որոնք հավատացած են, որ կաշառքի դեպքերը նվազել են, էականորեն նվազել է: Եթե 2019 թ.-ին հարցվածների մոտ 91%-ը գտնում էր, որ կաշառքի դեպքերի հաճախականությունը նվազել է, ապա 2021 թ.-ին այդ մարդկանց տոկոսը 66.5% է: Նույնը վերաբերում է կաշառքի չափերին՝ 2019թ.-ին 80 %-ից ավելին (82.4%) կարծում էր, որ կաշառքի չափերը նվազել են, այսօր նրանք կազմում են դրա մոտ կեսը՝ 42%:

Գծապատկեր 16. Պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի դեպքերի հաճախականության վերաբերյալ ընկալումները (%)



Գծապատկեր 17. Պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի չափի վերաբերյալ ընկալումները (%)



3.2. Կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրները

Հարցվածները, որպես կոռուպցիայի գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրներ, ավելի հաճախ նշել են ԶԼՄ-ները (26,9%), ասեկոսեները՝ տեղեկությունները ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից (23%), և սոցիալական ցանցերը (20,6%): Էական է ընդգծել ասեկոսեների բարձր տոկոսը (23%), որն ընդամենը

մոտ 4%-ով է պակաս ԶԼՄ-ների ցուցանիշից: Պատկերը 2019 թ.-ի հետ համեմատ, գրեթե չի փոխվել (տե՛ս Գծապատկեր 18): Համեմատական կարգով, էապես աճել է հասարակական կազմակերպությունների միջոցով տեղեկատվության ստացման տարբերակը նշած հարցվածների բաժինը:

Գծապատկեր 18. Կոռուպցիան գնահատելու տեղեկատվության աղբյուրները (%)



Հարցվածների մեծամասնությունը (22,8%) նշել է, որ ոչ մի լրատվամիջոց ժողովրդականություն չի վայելում կոռուպցիայի մասին հավաստի տեղեկություն ստանալու հարցում: Հաջորդիվ Հանրային հեռուստաընկերությունն է (17,7%), ապա «Արմենիան» 14,6%-ով, և հետո միայն «Շանթը»՝ 14,6 % (տե՛ս Գծապատկեր 19), նշվել են որպես ժողովրդականություն վայելող լրատվամիջոցներ: Հետաքրքիր է, որ 2019 թ.-ին «Շանթն» առաջատար էր և վայելում էր հարցվածների 25%-ից ավելիի վստահությունը, երկրորդ տեղում «Արմենիան» էր՝ մոտավորապես 20%, և միայն երրորդում՝ Հանրային հեռուստաընկերությունը՝ գրեթե 15% վստահությամբ: Նախորդ տարվա արդյունքների հետ համեմատումը փաստում է, որ մարդկանց մոտ մեծացել է անվստահությունը զանգվածային լրատվական միջոցների նկատմամբ, հատկապես՝ «Շանթ» և «Արմենիա» ՀԸ-ների հանդեպ, և, ընդհակառակը, աճել է վստահությունը Հանրային հեռուստաընկերության նկատմամբ: Ընդհանուր առմամբ, 2019 թ. համեմատ հեռուստաընկերությունների առաջին եռյակի նկատմամբ վստահությունը նվազել է՝ 60%-ից դառնալով 45,6%:

Հետաքրքրական է, որ պատկերը տարբեր է քաղաքային և գյուղական բնակավայրերում: Ստորև բերված աղյուսակից (տե՛ս Աղյուսակ 2) երևում է, որ քաղաքային և գյուղական բնակավայրերում ապրողների շրջանում կոռուպցիայի մասին լրատվություն տրամադրող լրատվամիջոցների նկատմամբ վստահություն հայտնածների տոկոսային բաժինը նկատելիորեն տարբեր է: Երևանում հարցվածների 22,3%-ը չի վստահում որևէ հեռուստաընկերության, 19,1%-ը վստահում է Հանրայինին, իսկ, օրինակ, «Արմենիա» և «Շանթ» ՀԸ-ների հանդեպ վստահությունն ավելի մեծ է գյուղական բնակավայրերում, քան Երևանում (մոտ

7-8%-ով): 2019թ.-ին «Արմնյուզ» ՀԸ-ը չի ընդգրկվել տասն ամենավստահելի լրատվամիջոցների շարքում, իսկ 2021թ.-ին այն արդեն հաջորդում է «Շանթ» հեռուստաընկերությունը և ամենամեծ վստահությունը վայելում է Երևանում հարցվածների շրջանում (5,7%):

Գծապատկեր 19. Կոռուպցիայի մասին տեղեկություն ստանալու համար ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունը (%)



Աղյուսակ 2. ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունը ըստ բնակավայրի (%, ամբողջի մեջ)՝ համեմատած 2019 թվականի արդյունքների հետ

2021	Երևան	Այլ քաղաք	Գյուղ
Ոչ մի	22.3	25.7	21.0
Հ1	19.1	16.3	17.2
TV5	2.6	1.9	2.4
Արմենիա TV	10.3	15.9	18.4
Շանթ	10.6	14.4	17.3
Արմնյուզ	5.7	1.6	3.3
Ազատություն TV	5.4	6.2	4.2
Երկիր Մեդիա	1.4	2.7	2.4
Այլ	22.6	15.2	13.8
Ընդհանուր	**100**	**100**	**100**

2019	Երևան	Այլ քաղաք	Գյուղ
Ոչ մի	14.4	15.8	14.7
Հ1	14.5	12.1	13.1
Արմենիա TV	13.9	16.8	23.0
Շանթ	21.6	22.4	24.3
Ազատություն	6.7	7.0	3.0
TV5	2.1	1.5	0.9
Երկիր Մեդիա	0.8	1.6	1.7
Այլ	26.1	22.8	19.4
Ընդհանուր	**100.0**	**100.0**	**100.0**

Նշում. 2019 թ.-ին հարցվել է Azatutyun.am և Ազատություն ռադիոկայան, իսկ 2021թ.-ին՝ «Ազատություն», որն իր մեջ նե ռառում է թե՛ հեռուստաընկերությունը, թե՛ ռադիոկայանը, թե՛ Azatutyun.am-ը: Բոլոր 2%-ից ցածր նշում ունեցող հեռուստաընկերությունները ներկայացված են որպես «այլ»:

Կանանց գրեթե 16%-ը վստահում է «Շանթ»-ին, մինչդեռ տղամարդկանց միայն 11,4%-ն է վստահում նշված հեռուստաընկերությանը (տե՛ս Աղյուսակ 3): Նախորդ հարցման համեմատ վստահության տարբերությունն ըստ սեռի ավելի ակնառու է: Այսպես, օրինակ, 2019թ.-ին կանայք ավելի շատ վստահել են «Շանթ» և «Արմենիա» ՀԸ-ներին, «Ազատությանը», իսկ տղամարդիկ՝ «Հանրային»-ին և «News.am»-ին:

Աղյուսակ 3. ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունն ըստ սեռի (%, ամբողջի մեջ)՝ համեմատած 2019 թվականի արդյունքների հետ

2021	Իգական	Արական
Ոչ մի	22.4	23.4
Հ1	16.5	19.2
TV5	1.7	3.1
Արմենիա TV	15.6	13.4
Շանթ	16.0	11.4
Արմնյուզ	3.6	3.9
Ազատություն TV	5.0	5.5
Երկիր Մեդիա	2.1	2.1
Այլ	17.3	17.9
Ընդհանուր	100.0	100.0

2019	Արական	Իգական
Ոչ մի	16.4	14.3
Հ1	15.1	12.6
Արմենիա TV	14.4	19.2
Շանթ	21.3	23.4
Ազատություն	4.0	6.2
TV5	2.3	1.2
Երկիր Մեդիա	2.1	1.0
Այլ	24.5	22.2
Ընդհանուր	100.0	100.0

Աղյուսակ 4. ԶԼՄ-ների նկատմամբ վստահությունն ըստ տարիքի (%, ամբողջի մեջ)՝ համեմատած 2019 թվականի արդյունքների հետ

2021	18-35	36-50	51-64	65+
Ոչ մի	26.1	23.3	22.5	17.2
Հ1	13.6	17.8	19.4	21.6
TV5	1.7	3.1	2.2	2.2
Արմենիա TV	14.7	13.9	15.5	14.2
Շանթ	11.7	13.1	15.8	16.2
Արմնյուզ	2.8	3.6	3.4	6.0
Ազատություն TV	8.8	5.2	3.6	1.7
Երկիր Մեդիա	0.5	1.8	3.1	3.7
Այլ	20.1	18.3	14.3	17.2
Ընդհանուր	100.0	100.0	100.0	100.0

2019	18-35	36-50	51-64	65+
Ոչ մի	20.5	15.9	13.3	10.3
Հ1	9.5	12.4	14.5	16.6
Արմենիա TV	15.3	17.5	18.5	19.5
Շանթ	17.1	20.5	23.8	28.7
Ազատություն	9.5	6.8	4.5	1.8
TV5	1.1	1.1	2.4	1.4
Երկիր Մեդիա	1.1	1.5	1.5	1.3
Այլ	25.9	24.4	21.4	20.4
Ընդհանուր	100.0	100.0	100.0	100.0

Նշանակալի տարբերություն կա տարբեր տարիքային խմբերի մարդկանց մոտ կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության ստացման հարցում տարբեր հեռուստաընկերությունների նկատմամբ վստահության առումով: Անվստահության ցուցանիշը մեծ է երիտասարդների մոտ (այս հարցման արդյունքներով ոչ մի հեռուստաընկերության չի վստահում 18-35 տարեկանների գրեթե 26.1%-ը, տե՛ս Աղյուսակ 4):

3.3. Կոռուպցիոն եղանակով խնդիրները լուծելու հիմնական դրդապատճառները

Ըստ հարցման արդյունքների՝ կաշառք վերցնելու հիմնական դրդապատճառը լավ ապրելու ցանկությունն է (29%) (տե՛ս գծապատկեր 20): Հարցվածների գրեթե 23%-ի համար կաշառք վերցնելը պայմանավորված է կաշառքի մի մասը «վերև» տալու անհրաժեշտությամբ, մեկ այլ մասն էլ (22.9%) այն հիմնավորում է որպես սովորություն՝ քանի որ բոլորն են վերցնում: Հարցվածների ավելի քիչ տոկոսը՝ 13,7%-ը, կարծում է, որ կաշառք վերցնելու դրդապատճառ կարող է լինել ընտանիք պահելու պարտավորությունը, իսկ 10,9%-ն էլ կարծում է, որ ծառայությունը մատուցելուց հետո շնորհակալությունը կաշառք չի կարող համարվել:

Գծապատկեր 20. Պատկերացրեք պաշտոնյային կաշառք են առաջարկել, նշվածներից ո՞րը կլինի պաշտոնյայի կողմից կաշառքը վերցնելու հիմնական շարժառիթը:(%)



Հարցվածների մի մասը (40,6%) որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական դրդապատճառ նշել է վախը՝ «քանի որ պատժվելու ռիսկը բարձր է» , մինչդեռ մյուս մասի համար (44%) դա պայմանավորված է մարդկանց բարոյական, արժեքային համակարգով, քանի որ կոռուպցիան բարոյապես ընդունելի չէ կամ հանցագործություն է: Եվս 13,3%-ի համար դրդապատճառ կարող է լինել կոռուպցիայի նվազեցմանը/վերացմանը նպաստելը:

Գծապատկեր 21. Կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական դրդապատճառները (%)



Այսպիսով, Գլուխ 3-ում իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ ըստ հարցվածների 37,2%-ի կոռուպցիան շատ մեծ կամավելի շուտ մեծ ազդեցություն ունի իրենց և իրենց շրջապատի վրա: Սակայն, հարցվածների գրեթե մեկ քառորդը նշել է, որ ազդեցությունն ավելի շուտ փոքր է, իսկ այն ազդեցություն չունի՝ հարցվածների մեկ երրորդի համար: Հետաքրքրական է, որ կանայք, երիտասարդները՝ 18-35 տարեկան քաղաքացիները, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները, Երևան քաղաքի բնակիչները, ինչպես նաև 220.000 ՀՀ դրամից ավելի եկամուտ ունեցողները կարծում են, որ կոռուպցիան շատ մեծ/ավելի շուտ մեծ ազդեցություն ունի իրենց շրջապատի/համայնքի վրա:

Մարդկանց թիվը, որոնք հավատացած են, որ կաշառքի դեպքերը նվազել են, 2019 թ.-ի համեմատ էականորեն նվազել է: Եթե 2019 թ.-ին հարցվածների մոտ 91%-ը գտնում էր, որ կաշառքի դեպքերի հաճախականությունը նվազել է, ապա 2020 թ.-ին այդ մարդկանց տոկոսը 66.5% է: Նույնը վերաբերում է կաշառքի չափերին՝ 2019թ.-ին 80%-ից ավելին (82.4%) կարծում էր, որ կաշառքի չափերը նվազել են, այսօր նրանք կազմում են դրա մոտ կեսը՝ 42%:

Էական է ընդգծել ասեկոսեների՝ որպես կոռուպցիայի մասին նշանակալի տեղեկատվական աղբյուրի, բարձր տոկոսը (23%), որն ընդամենը մոտ 4%-ով պակաս, քան ԶԼՄ-ներ ցուցանիշը: Համեմատական կարգով, էապես աճել է հասարակական կազմակերպությունների միջոցով տեղեկատվության ստացման տարբերակը նշած հարցվածների բաժինը:

ԶԼՄ-ների՝ որպես կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուրի նկատմամբ վստահության ընդհանուր անկման պայմաններում հարցվածների մեծամասնությունը նշել է, որ ոչ մի (22,8%) լրատվամիջոց ժողովրդականություն չի վայելում կոռուպցիայի մասին հավաստի տեղեկություն ստանալու հարցում:

Հարցվածների մի մասը (40,6%) որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական դրդապատճառ նշել է վախը՝ «քանի որ պատժվելու ռիսկը բարձր է» , մինչդեռ մյուս մասի համար (44%) դա պայմանավորված է մարդկանց բարոյական, արժեքային համակարգով, քանի որ կոռուպցիան բարոյապես ընդունելի չէ կամ հանցագործություն է:

ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցի այս մասում համառոտ քննարկվում է հանրության շրջանում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականության մասին տեղեկացվածությունը:

4.1. Պետական մարմինների և հասարարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածությունը

Հարցվածները նշել են, թե որոնք են Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող իրենց հայտնի պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները: Հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի, 20,7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0,3%-ը՝ հրաժարվել պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65,1%): Հայաստանում հակակոռուպցիոն գործունեություն ծավալող պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասին տեղյակ (n=671) հարցվածների 13,6%-ը գիտի ոստիկանության (2019թ.՝ 23,3%), 12,4%-ը՝ Ազգային անվտանգության ծառայության (2019թ.՝ 21,8%), 5.8%-ը՝ ՀՀ վարչապետին ենթակա Պետական վերահսկողության ծառայության (2019թ.՝ 3,9%), 4,7%-ը՝ Դատախազության (2019թ.՝ 4,5%) մասին: Ընդ որում, տեղեկացվածության մակարդակը ոստիկանության և ԱԱԾ-ի վերաբերյալ՝ որպես հակակոռուպցիոն գործունեություն ծավալող մարմինների, նվազել է, մինչդեռ ԿԿՀ-ի պարագայում փոքր աճ կա: Մնացած բոլոր պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ տեղեկացված հարցվածների բաժինը չի գերազանցում 3%-ը:

Այսպես, ոստիկանության հակակոռուպցիոն գործունեությունն արդյունավետ է գնահատել վերջինիս հակակոռուպցիոն գործունեությանը տեղյակ հարցվածների (n=203) 13,6%-ի գրեթե 73%-ը, Ազգային անվտանգության ծառայության գործունեությունը (n=184)՝ 12,4%-ի 72,3%-ը, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովինը (n=123)՝ 8,4%-ի միայն 52%-ը:

Գծապատկեր 22. Հակակոռուպցիոն գործունեություն ծավալող պետական մարմինների աշխատանքի արդյունավետության գնահատումն ըստ հարցվողների (%, ամբողջի մեջ)



4.2. Հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ տեղեկացվածությունը

Գծապատկեր 23-ից երևում է, որ ոչ մի աջակցության կամ տեղեկատվության կարիք չունեցողների բաժինը 2019 թ.-ից էապես նվազել է՝ դառնալով 43,5%-ից 30,4%, այսինքն՝ հասարակության մեջ մոտ 20%-ով ավելացել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալ ցանկացողների քանակը: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը (22,9%), տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում (22,8%), պետական մարմինների թեժ գծերի մասին (20,2%), հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասին (18,2%) և հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը (18,2%): Գրեթե 10%-ով ավելացել է իրավապահ մարմիններում և դատարանում անվճար ներկայացուցչության կամ փաստաբանական ծառայության կարիք ունեցողների բաժինը:

Գծապատկեր 23.Կոռուպցիայի հարցում անհրաժեշտ աջակցության, տեղեկատվության կարիքը (այո, %)



Գլուխ 4-ում ներկայացված համառոտ վերլուծությունը ցուց տվեց, որ Հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: Միևնույն ժամանակ, հասարակության մեջ մոտ 20%-ով ավելացել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալ ցանկացողների քանակը: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը, տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, պետական մարմինների թեժ գծերի մասին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասին և հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեկույցի այս մասն անդրադառնում է կոռուպցիոն իրավիճակներում հարցվողների անհատական փորձառությանը, ինչպես նաև նրանց կողմից հակակոռուպցիոն գործունեություն իրականացնելու պատրաստակամությանը:

5.1. Անհատական փորձառությունը կոռուպցիոն իրավիճակներում

Ստորև գծապատկեր 24-ից երևում է, որ վերջին 12 ամիսների ընթացքում հարցվածներն ավելի հաճախ շփվել են կոմունալ ծառայությունների (76,7%), առողջապահական հաստատությունների (74,4%), կապ տրամադրող ծառայությունների (70,7%), կրթական հաստատությունների (46,9%), համայնքային (42%) և սոցիալական ապահովության ծառայությունների (39,5%) հետ: Այստեղ կարելի է ընդգծել, որ հենց այս ոլորտներին էլ ազգաբնակչությունն ամենաշատն է վստահում:

Գծապատկեր 24. Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք գործ ունեցե՞լ եք հետեւյալ հաստատությունների հետ կամ օգտվե՞լեք հետեւյալ ծառայություններից (%)



Համեմատելով Գծապատկեր 24-ում տարբեր հաստատությունների/ ծառայությունների հետ առնչված և Գծապատկեր 25-ում նրանց հավելյալ վճար տված հարցվածների բաժինը՝ տեսնում ենք, որ որոշ ծառայությունների դեպքում վերջին երկու տարիների ընթացքում իրականացված բարեփոխումները փոքր-ինչ օգնել են նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, մինչդեռ որոշների համար հակառակ պատկերն է: Այսպես, Մաքսային ծառայության հաստատություններ դիմածների գրեթե 23%-ըհավելյալ վճար է տվել(տե՛ս գծապատկեր 25)[4]: Բարելավվել է պատկերը նոտարական ծառայություններում՝ 5,9%-ից նվազելով մինչև 2,1%, անշարժ գույքի կադաստրում՝ 3,3%-ից դառնալով 1,9%:

Գծապատկեր 25. Ստիպված եղե՞լ եք հավելյալ վճար տալ կամ ստանալ (այո, %)



4. Հարցազրուցավարների վերապատրաստման ընթացքում տեղեկացվել է, որ խոսքը գնում է ոչ պաշտոնական հավելյալ վճարների մասին, սակայն սա չի նշանակում, որ հարցվողները որպես հավելյալ վճար չէին կարող ընկալել օրենքով սահմանված վճարովի ծառայությունները, օրինակ ԴԱՀԿ-ում և մաքսային ծառայությունում:

5.2. Հակակոռուպցիոն հնարավոր անհատական գործողությունները

Հարցվածների կեսից ավելին (51,1%) չի հայտնի համապատասխան մարմիններին, եթե անձամբ առնչվի կոռուպցիայի հետ, 40,9%-ը կհայտնի համապատասխան մարմիններին (տե՛ս գծապատկեր 26):

Գծապատկեր 26. Եթե անձամբ առնչվեք կոռուպցիայի հետ, այդ մասին կհայտնե՞ք համապատասխան մարմիններին (%)



Պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար դրական պատասխան տվածների գրեթե կեսը (46.8%) նշել է, որ կդիմի ոստիկանություն, մոտ 5%-ը՝ ՀՀ վարչապետին, տվյալ պաշտոնյայի վերադասին (4,2%) և ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի վերադասին (4%) (տե՛ս Գծապատկեր 27): 2019 թ.-ից մոտ 6%-ով նվազել է այն հարցվածների բաժինը, որոնք հակված են դիմելու ՀՀ վարչապետին, և, ընդհակառակը, շուրջ 27%-ով ավելացել է ոստիկանություն դիմելու պատրաստ հարցվածների բաժինը: Մյուս հաստատությունների պարագայում էական փոփոխություններ չկան:

Հարցվածների կարծիքով՝ կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու հիմնական պատճառը շարունակում է մնալ հասարակության քննադատությանն արժանանալու վախը, քանի որ կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելը կամ ազդարարելը հարցվածների գրեթե 57%-ի կարծիքով պախարակելի է (տե՛ս Գծապատկեր 28): Այնուամենայնիվ, 2019 թ. համեմատ՝ նման կարծիք կիսողների քանակը գրեթե 20%-ով պակասել է: Չհայտնելու այլ պատճառների թվում հարցվածների մեկ երրորդից ավելին (36,6%) նշել է վախը, որ կպատժվեն, օրինակ՝ աշխատանքից կհեռացվեն, պատասխանատվության կենթարկվեն «սուտ» մատնության համար: Մոտ 27,4%-ը մտավախություն ունի, որ նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի, իսկ գրեթե 13%-ը կարծում է, որ կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ քո շահերին չի առնչվում:

Գծապատկեր 27. Ո՞ր հաստատություն կդիմեիք՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար (այո, %) [5]



5. 2019 թվականի հարցման 38-րդ և and 39-րդ հարցը և 2019 թվականի հարցման 37-րդ հարցը վերլուծված են միասին

Գծապատկեր 28. Որո՞նք են կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու պատճառները (այո, %)



Հարցվածների 51,1%-ին, որոնք կարծիք էին հայտնել, թե կոռուպցիայի հետ առնչվելիս չեն դիմի համապատասխան մարմիններին (տե՛ս Գծապատկեր 26), առաջարկվել է նշել պատճառը (տե՛ս Գծապատկեր 29): Նրանց մեկ հինգերորդից ավելին (21,9%) կարծում է, որ անիմաստ է, 20,1%-ը վախենում է հետևանքներից, իսկ մոտ 13%-ը չի վստահում պատկան մարմիններին: Տաս տոկոսից (10%)-ից պակաս է այն հարցվածների բաժինը, որոնք կարծում են, թե կոռուպցիան դժվար ապացուցելի է (7%), ժամանակ չունեն (6,4%), վճարելը կամ նվեր տալը տարածված երևույթ է, հետևաբար՝ ինչո՞ւ դիմի (5,2%): Այլ տարբերակների թվում (n=87, 11,2%) հարցվածները նշել են, որ դա համարվում է «գործ» տալ, չեն ուզում խառնվել՝ ավելորդ քաշքշուկներից, գլխացավանքներից խուսափելու համար, ինչպես նաև կարծում են, որ ինքնուրույն կլուծեն խնդիրը:

Գծապատկեր 29. Ինչու՞չեք դիմի (%, n=T76)



5.3. Հակակոռուպցիոն անհատական վարքագծի ընկալումները

Հարցվածների գրեթե կեսը պատրաստ է մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում: Ընդ որում, այդպիսի ցանկություն հայտնել են ավելի շատ գյուղական բնակավայրերում ապրողները, ինչպես նաև 18-35 տարեկան անձինք:

Գծապատկեր 30 .Պատրա՞ստեք/ցանկանու՞մ եք մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում (%)



Որպես կոնկրետ քայլ հարցվողների մոտ 36,6%-ը պատրաստ է խուսափել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց, իսկ 14,3%-ը՝ խոսել ազգականների և ընկերների հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին, ինչպես նաև հայտնել պատկան մարմիններին (12,3%) (տե՛ս Գծապատկեր 31): Ընդհանուր առմամբ, 2019 թ. համեմատ էապես նվազել է այն հարցվածների բաժինը, որոնք պատրաստ էին խուսափել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց (12,5%-ով), հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց (10,5%-ով), ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների/դաշինքների (9,6%-ով):

Բացի նշված տարբերակներից, հարցվածների 11%-ը պատրաստակամություն է հայտնել մասնակցել հանրության կողմից վերահսկողության միջոցառումներին, 2,3%-ը՝ ներգրավվել հակակոռուպցիոն ՀԿ-ների աշխատանքներում:

Գծապատկեր 31. Հակակոռուպցիոն գործողությունների մասնակցություն ապագայում (այո, %)[6]



6. 2019 թվականի հարցման 44-րդ, 44-ի ա հարցը և 2019 թվականի հարցման 35-րդ հարցը վերլուծված են միասին:

Հարցին, թե ինչու չեն ցանկանում ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում, հարցվածների 47,5%-ը (n=722) մտավախություն է հայտնել, որ սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար, 20,1%-ը նշել է այլ տարբերակներ, 9,7%-ը մտավախություն ունի, որ այն կարող է իրենց համար բացասական հետևանքներ ունենալ, ավելի քիչ տոկոսն այն կարծիքին է, որ կոռուպցիան իրենց ոչ մի վնաս չի տալիս (9%): Հարցվածների պատասխանների մեջ վիճակագրորեն նշանակալի տարբերություն կա կախված տարիքից և կրթամակարդակից. «սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար» տարբերակն ընտրածների մեջ գերակշռում են 36-ից բարձր տարիքի քաղաքացիները: Ավելի տարեց և ավելի ցածր կրթամակարդակ ունեցող քաղաքացիներն ավելի հակված են մտածել, որ սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կառուպցիան նվազեցնելու համար:

Գծապատկեր 32. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվելու պատճառները (%)



Հետաքրքրական է ստորև խաչաձև աղյուսակներում տեսնել, թե մարդկանց կարծիքով առհասարակ Հայաստանում որքանով է հնարավոր նվազեցնել կոռուպցիան, և եթե հնարավոր չէ, ապա ինչու (տե՛ս Աղյուսակ 6 և Աղյուսակ 7):

Աղյուսակ 6. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվելու պատճառն ըստ հարցվածների Հայաստանում կոռուպցիան առհասարակ նվազեցնելու վերաբերյալ ունեցած կարծիքի (%) (%)

	Սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար [n = 343]	Այն կարող է ինձ համար բացասական հետևանքներ ունենալ [n = 70]	Ըմբռնումով եմ մոտենում կոռուպցիոն դեպքերին, քանի որ մարդիկ դրան դիմում են կարիքից դրդված [n = 38]	Կոռուպցիան ինձ ոչ մի վնաս չի տալիս [n = 65]	Այլ [n = 145]	ԴՊ [n = 55]	ՀՊ [n = 6]
Ընդհանրապես չի կարող նվազեցվել	30,3	30	28,9	36,9	18,6	20	16,7
Հնարավոր է նվազեցնել միայն մասամբ	36,7	40	52,6	36,9	42,8	36,4	66,7
Հնարավոր էականորեն նվազեցնել	17,8	18,6	10,5	9,2	26,2	14,5	0
Հնարավոր է ամբողջովին վերացնել	12,8	10	5,3	12,3	12,4	21,8	16,7
ԴՊ	2,3	1,4	2,6	4,6	0	7,3	0

Աղյուսակ 6-ից երևում է, որ հարցվածներն առհասարակ հակված են կարծելու, որ սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել, որովհետև ի սկզբանե ունեն այն կանխակալ կարծիքը, որ կոռուպցիան Հայաստանում հնարավոր է նվազեցնել միայն մասամբ (36,7%) կամ այն ընդհանրապես հնարավոր չէ նվազեցնել (30,3%): Նույն պատկերն է նաև բոլոր այն հարցվածների պարագայում, որոնք հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվելը հիմնավորվում են այն տեսակետով, որ այն կարող է իրենց համար բացասական հետևանքներ ունենալ (40% և 30%, համապատասխանաբար), ըմբռնումով են մոտենում կոռուպցիոն դեպքերին, քանի որ մարդիկ դրան դիմում են կարիքից դրդված (52,6% և 28,9%, համապատասխանաբար): Մինչդեռ, այլ պատճառներով հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուն պատրաստակամություն չհայտնածների մեջ փոքրինչ ավելանում է այն լավատեսների բաժինը, որոնք կարծում են, որ կոռուպցիան Հայաստանում, այնուամենայնիվ, հնարավոր է էականորեն նվազեցնել (26,2%):

Կարևոր է հասկանալ, թե, մարդիկ ինչու են հակված կարծելու, որ սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու հարցում: Ներքևում պատկերված աղյուսակ 7-ից երևում է, որ պատճառներն ավելի սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մշակութային են. հարցվածները հակված են հիմնականում կարծելու, որ պատճառն ազգային մտածելակերպն է ու մշակույթը (20,4%), մարդիկ դրան սովոր են (10,4%), կամ պատճառը մարդկանց հոգեբանությունն է՝ ձգտում են փողի կամ իշխանության: Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվող հարցվածներից նրանք, որոնք կարծում էին, որ

այն կարող է իրենց համար բացասական հետևանքներ ունենալ, որպես Հայաստանում կոռուպցիան նվազեցնելու անհնարարինություն տեսնում են նաև երկրում տիրող սոցիալ-տնտեսական վատ վիճակը (9,7%): Կոռուպցիայի հանդեպ անտարբեր քաղաքացիները համարում են, որ այն եկել է հին ժամանակներից ու արմատավորվել (10,4%):

Աղյուսակ 7. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցելուց հրաժարվելու պատճառը (%)

	Սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար [n = 230]	Այն կարող է ինձ համար բացասական հետևանքներ ունենալ [n = 49]	Ընդհանրապես եմ մոտենում կոռուպցիոն դեպքերին, քանի որ մարդիկ դրան դիմում են կարիքից դրդված [n = 31]	Կոռուպցիան ինձ ոչ մի վնաս չի տալիս [n = 48]	Այլ [n= 89]	ԴՊ/ ՀՊ [n = 36]
Ազգային մտածելակերպը և մշակույթը	20,4	28,6	29	12,5	16,9	12,9
Մարդիկ սովոր են	10,4	12,2	9,7	10,4	4,5	36,1
Մարդկանց հոգեբանությունը / ագահ են, ձգտում են փողի/ իշխանության	9,1	2	16,1	12,5	11,2	6,5
Նախկին իշխանություններից է եկել և արմատավորվել, նրանք դեռ կան պետական համակարգում	1,7	4,1	0	0	3,4	0
Երկրում վիճակը անկայուն է և անորոշ	0,9	0	0	0	0	0
Օրենքները և վերահսկողության մեխանիզմները չեն գործում	7	8,2	6,5	4,2	4,5	3,2
Ամբողջ աշխարհում է տարածված և հնարավոր չէ հաղթահարել	7	8,2	6,5	4,2	4,5	3,2
Փոքր ազգ ենք, ԽԾԲ-ն շատ տարածված է	0,9	4,1	0	0	1,1	0
Մարդկանց կրթության և գիտակցության մակարդակը ցածր է	0,9	4,1	3,2	0	2,2	3,2
Կլանների/օլիգարխների առկայություն	0	0	0	0	1,1	3,2
Հնարավորություն է տալիս խնդիրները արագ լուծել	1,7	2	3,2	0	1,1	0
Անհրաժեշտ է սերնդափոխություն/ երկար ժամանակ է պետք	1,7	2	2	4,2	3,3	6,5

Ռուսաստանից կախվածություն կա	0,4	0	0	2,1	0	3,2
Ազգը միասնական չէ	1,3	0	3,2	0	0	20
Սոցիալ-տնտեսական վատ վիճակ	2,6	4,1	9,7	6,3	7,9	29,7
Սովետական ժամանակներից եկել ու արմատավորվել է	0,4	0	0	0	1,1	0
Հին ժամանակներից եկել ու արմատավորվել է	7,4	2	6,5	10,4	4,5	0
Ներկա իշխանությունները, պաշտոնյաները կոռումպացված են	7,4	0	0	4,2	2,2	3,2
Այնքան շատ է տարածված, որ անհնար է վերացնել	1,7	0	0	0	0	0
Յուրաքանչյուր մարդ ինքը պետք է փոխվի, կախված է մարդկանցից	0,4	4,1	0	0	2,2	0
Եթե մինչև հիմա հնարավոր չի եղել, այլևս հնարավոր չի լինի/ չափազանց դժվար է	0,4	0	3,2	0	1,1	0
ԴՊ	7	8,2	6,5	16,7	9	16,1
ՀՊ	1,3	0	0	0	0	0

Հետաքրքիր է հասկանալ նաև, թե հարցվածներն անցյալում ինչպիսի մասնակցություն են ունեցել հակակոռուպցիոն գործողություններին և համեմատել ստացված արդյունքները 2019 թ. հետազոտության արդյունքների հետ:

Գծապատկեր 33-ից երևում է, որ ինչպես և 2019 թվականին, այսօր էլ բնակչության կողմից հակակոռուպցիոն գործողություններին մասնակցությունը հիմանականում տեղի է ունենում հանրային ծառայությունների համար կաշառք տալուց խուսափելու (50,9%), իրենց ազգականների և ընկերների հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին խոսելու (31,3%) և/կամ պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց հրաժարվելու (30,7%) միջոցով: Հատկանշական է դրական առաջընթացը այս գործընթացում՝ բնակչության առավել ակտիվ ներգրավվածության առումով:

Եթե համեմատական տանենք բոլոր այն հակակոռուպցիոն գործողությունների հետ, որոնք մարդիկ պատրաստ են իրականացնել ապագայում և իրականացրել են անցյալում, ապա կառանձնանա հասարակության մի լայն շերտ, որը, անկախ ամեն ինչից, պայքարում է Հայաստանում կոռուպցիոն տարբեր երևույթների դեմ, և պատրաստ է շարունակել այդ պայքարը՝ իրականացնելով տարաբնույթ հակակոռուպցիոն գործողություններ (տե՛ս Աղյուսակ 8): Բոլոր նրանք, ովքեր խուսափել են հանրային ծառայությունների համար կա-

շառք տալուց, պատրաստ են մեծ մասամբ ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների (77,8%): Նրանք, ովքեր անցյալում խոսել են իրենց ազգականների և ընկերների հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին, պատրաստ են հայտնել կոռուպցիոն դեպքերի մասին հեռուստահաղորդումներին կամ սոցիալական մեդիայի միջոցներին (71,4%): Նրանք, ովքեր հրաժարվել են պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց, ապագայում մեծամասամբ պատրաստ են ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների/ դաշինքների/ պատգամավորների (55,6%): Նրանք, որոնք անցյալում ընտրել են հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների, ապագայում պատրաստ են մեծամասամբ մասնակցել հակակոռուպցիոն ստորագրահավաքների/ միջոցառումների/ ցույցերի (31,8%) և այլն:

Գծապատկեր 33. Հակակոռուպցիոն գործողություններին մասնակցությունն անցյալում նախորդ հետազոտության արդյունքների համեմատ (այո, %)



Աղյուսակ 8. Կապն անցյալում ունեցած հակակոռուպցիոն գործողություններին մասնակցության և պատրաստակամությունն ապագայում իրականացվող նմանատիպ գործողությունների մասնակցության միջև (%)

	Պահպանել կարգը և հետևել օրենքներին [n = 346]	Խուսափել հանրային ծառ. համար կաշառք տալուց [n = 273]	Խոսել ազգ. և ընկեր. հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին [n = 107]	Հրաժարվել պաշտոն. կամ նրանց բարեկամ. «լավություն» անելուց [n = 64]	Ընտրել հակակոռ. իմաստով վստահ. ներշնչող կուսակց. [n = 9]	Հայտնել պետական մարմին. թեժ գծերի միջոցով [n = 60]	Մասնակցել հակակոռուպցիոն ստորագր./միջոցառ./ցույցերի [n = 22]	Հայտնել (ազդարարել) պատկան մարմիններին [n = 92]	Բոյկոտել կոռումպ. բիզնեսը [n = 11]	Մասնակցել հակակոռ. գիտելիքի տարածմանը և կրթ. արշավներին [n = 30]	Հայտնել հեռուստառադիո. հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին [n = 7]
Խուսափել եմ հանր. ծառ. համար կաշառք տալուց	60,7	66,3	70,1	64,1	77,8	50	59,1	58,7	63,6	60	42,9
Խոսել եմ ազգ. և ընկեր. հետ կոռուպցիայի անընդ. լինելու մասին	37,6	37,7	58,9	39,1	44,4	50	31,8	47,8	36,4	36,7	71,4
Հրաժարվել եմ պաշտոն. կամ նրանց բարեկ. «լավություն» անելուց	36,7	38,1	32,7	39,1	55,6	31,7	27,3	35,9	45,5	33,3	14,3
Ընտրել եմ հակակոռ. իմ. վստահ. ներշնչ. կուսակց.	11,6	11,7	12,1	18,8	11,1	26,7	31,8	15,2	0	20	28,6
Հայտնել եմ պետ. մարմին. թեժ գծերի միջ.	6,4	7,7	3,7	7,8	0	16,7	4,5	15,2	9,1	0	14,3
Հայտնել եմ (ազդ.) պատկան մարմիններին	3,8	5,1	1,9	7,8	11,1	13,3	0	9,8	9,1	3,3	0
Բոյկոտել եմ կոռ. բիզնեսը	3,5	4,4	8,4	7,8	0	5	9,1	2,2	0	6,7	0
Մասն. և աջակցել եմ հակակոռ. գիտ. տարածմանը և կրթ. արշավ.	3,5	2,9	4,7	9,4	11,1	6,7	9,1	3,3	0	3,3	0
Հայտնել եմ հեռուստառ. հաղ. կամ սոց.մեդ.	0,9	1,8	0	4,7	0	5	0	3,3	0	0	14,3

Բոլոր նրանք, ովքեր անցյալում կոռուպցիայի մասին հայտնել են պետական մարմիններին թեժ գծերի միջոցով, ապագայում էլ մեծ մասամբ պատրաստ են իրականացնել նույն հակակոռուպցիոն գործողությունը (16,7%): Նույն պատկերն ունենք հեռուստառադիո հաղորդումների կամ սոցիալական մեդիայի միջոցով բարձրաձայնելու պարագայում (14,3%): Հետաքրքիր է, որ բոլոր նրանք, ովքեր անցյալում բոյկոտել են կոռումպացված բիզնեսը, ապագայում ընդհանրապես ցանկություն չունեն նույնն անելու (0%), իսկ նրանք, ովքեր մասնակցել և աջակցել են հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին, ապագայում գրեթե պատրաստ չեն դա անել (3,3%), այլ մեծ մասամբ պատրաստ են մասնակցել հակակոռուպցիոն ստորագրահավաքների/ միջոցառումների/ ցույցերի (9,1%) և ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների (11,1%):

Հարցին, թե արդյոք վերջին 12 ամիսների ընթացքում Դուք կամ Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը հայտնել է որևէ պաշտոնյայի կողմից կոռուպցիոն երևույթի մասին, հարցվածների միայն 1,7%-ն է տվել դրական պատասխան (հայտնածների բաժինը 2019թ.-ի հետ համեմատ գրեթե չի փոխվել), ընդ որում՝ նրանց 18,5%-ն առաջին հերթին այդ մասին հայտնել է ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի ղեկավարին՝ ի տարբերություն 2019թ.-ի, երբ գեռակշռում էին ՀՀ վարչապետին ուղղված դիմումները (26.2%): Նվազել է նաև ոստիկանությանն ուղղված դիմումների բաժինը: Եթե նախկինում այն 17,3% էր, ապա այժմ կազմում է 7,9%: Այդուհանդերձ, քաղաքացիների կարծիքով ոստիկանությունն այն հիմնական հաստատությունն է, որին քաղաքացիները կդիմեին՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար:

Վերլուծության ընթացքում դիտարկվել է նաև, թե որքանո՞վ են իրենց պաշտպանված զգացել բոլոր այն հարցվածները, որոնք կոռուպցիոն դեպքի մասին հայտնել են այս կամ այն պատկան մարմնին, որքանո՞վ են ձեռնարկված հակակոռուպցիոն գործողությունները բավարարել հայտնողին, և բավարարված և չբավարարված լինելու դեպքում՝ որո՞նք են դրանց պատճառները, և համեմատել ստացված պատկերը 2019 թ. հարցման արդյունքների հետ:

Աղյուսակ 9. Որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգացել, երբ հայտնել եք կոռուպցիոն երևույթի կամ դեպքի մասին (%) (n = 26)

	2021	2019
Լիովին պաշտպանված	39	45
Ավելի շուտ պաշտպանված	15	17
Ավելի շուտ չպաշտպանված	23	9
Բոլորովին չպաշտպանված	23	29

Եթե համեմատենք նախորդ հարցման արդյունքների հետ, ապա աղյուսակ 9-ից երևում է, որ 8%-ով նվազել է իրենց պաշտպանված զգացածների բաժինը (2019թ.-ին այն կազմել է 62%, իսկ 2021թ.-ին՝ 54%): Ճշգրտող հարցին, թե ինչ տեղի ունեցավ կոռուպցիոն դեպքի մասին հաղորդելուց հետո, հարցվածների 50%-ը հայտնել է, որ որևէ քայլ չի ձեռնարկվել, և միայն 15%-ի դեպքում է խնդիրը ոչ ֆորմալ կերպով լուծվել. նրանք հետ են ստացել իրենց գումարը:

Աղյուսակ 10. Որքանո՞վ եք բավարարված այն գործողություններից, որ ձեռնարկվել են կոռուպցիոն երևույթի մասին տեղեկություններ ներկայացնելու արդյունքում (%) (n = 26)

Պետական պաշտոնյայի դեմ հարուցվել է պաշտոնական ընթացակարգ	7,7
Խնդիրը ոչ ֆորմալ կերպով լուծվեց, և Ձեզ վերադարձրեցին գումարը	15,4
Ձեզ խորհուրդ են տվել չշարունակել հաղորդման գործընթացը	3,8
Ձեր հաղորդման հետ կապված քայլեր չեն ձեռնարկվել	50,0
Դուք կրել եք միջադեպի մասին հաղորդելու բացասական հետևանքները	7,7
Այլ	15,4

Աղյուսակ 11. Որքանո՞վ եք բավարարված այն գործողություններից, որ ձեռնարկվել են կոռուպցիոն երևույթի մասին տեղեկություններ ներկայացնելու արդյունքում (%) (n = 26)

	2021	2019
Լիովին բավարարված եմ	15,4	34,8
Ավելի շուտ բավարարված եմ	26,9	7,5
Ավելի շուտ բավարարված չեմ	15,4	17,8
Բոլորովին բավարարված չեմ	38,5	39,8

Որպես բավարարված չլինելու պատճառ՝ պատասխանողների 50%-ը (n = 14) նշել է, որ հարցը լուծում չի ստացել, 35,7%-ը պատասխանել է, որ ձևական մոտեցում է ցուցաբերվել, իսկ ըստ 14,3%-ի՝ կոռուպցիոն երևույթի կամ դեպքի մասին տեղեկություն հայտնելուց հետո բացասական հետևանքներ են առաջացել իրենց մտերիմների համար կամ առաջացել է ավելի մեծ կոռուպցիա:

Եվ, վերջապես, այն հարցին, թե ովքեր են պատասխանատվություն կրում Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար, հարցվածների 7,8%-ը կա՛մ դժվարացել է պատասխանել, կա՛մ հրաժարվել է պատասխանել: Հարցվածների կեսից ավելին (54%) ընտրել է

«կառավարությունը կամ իշխող քաղաքական ուժը» տարբերակը, գրեթե 16%-ը համարում է, որ պատասխանատվություն կրում են հակակոռուպցիոն մարմինները, և 15%-ը միայն կարծում է, որ կոռուպցիոն երևույթների համար պատասխանատուն բոլորն են (տե՛ս Գծապատկեր 34):

Գծապատկեր 34. Ովքե՞ր են պատասխանատվություն կրում Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար



Գլուխ 5-ում մանրամասն ներկայացվեց հարցվողների՝ կոռուպցիայի հետ առնչվելու կենսափորձը: Էական է ընդգծել, որ որոշ մարմինների, օրինակ մաքսային ծառայության պարագայում հավելավճար տալու պրակտիկան ավելի է ընդգծվել, իսկ, օրինակ նոտարական գրասենյակների պարագայում ավելի է նահանջել: Որքան էլ, որ հարցվողները պատրաստ են իրականացնել հակակոռուպցիոն գործունեություն, նրանց կեսից ավելին (51,1%) չի հայտնի համապատասխան մարմիններին, եթե անձամբ առնչվի կոռուպցիայի հետ: Հարցվողների մեկ երրորդից ավելին (36,6%) նշել է, որ հետ է պահում վախը, որ կպատժվեն, օրինակ՝ աշխատանքից կհեռացվեն, պատասխանատվության կենթարկվեն «սուտ» մատնության համար: Մոտ 27,4%-ը մտավախություն ունի, որ նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի, իսկ գրեթե 13%-ը կարծում է, որ կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ քո շահերին չի առնչվում: Միևնույն ժամանակ, հարցվողների ճնշող մեծամասնությունը (մոտ 90%) նշում է, որ կուռուպցիան կարելի է հեշտ ապացուցել: Հարցվածների գրեթե կեսը պատրաստ է մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում: Ընդ որում, այդպիսի ցանկություն հայտնել են ավելի շատ գյուղական բնակավայրերում ապրողները, ինչպես նաև 18-35

տարեկան անձինք: Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում էական են սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մշակութային գործոններ. օրինակ, բոլոր նրանք, ովքեր խուսափել են հանրային ծառայությունների համար կաշառք տալուց, պատրաստ են մեծ մասամբ ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների (77,8%): Նրանք, ովքեր անցյալում ընտրել են հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների, ապագայում պատրաստ են մեծ մասամբ մասնակցել հակակոռուպցիոն ստորագրահավաքների/ միջոցառումների/ ցույցերի (31,8%) և այլն: Նրանք, ովքեր անցյալում բոյկոտել են կոռումպացված բիզնեսը, ապագայում ընդհանրապես ցանկություն չունեն նույնն անել, իսկ նրանք, ովքեր մասնակցել և աջակցել են հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին, ապագայում գրեթե պատրաստ չեն դա անել: Այն 22 անհատները, ովքեր հարցման ընթացքում նշել են, որ անձամբ են առնչվել կոռուպցիայի հետ և հաղորդել են այդ մասին, ճշգրտող հարցին, թե ինչ տեղի ունեցավ կոռուպցիոն դեպքի մասին հաղորդելուց հետո հայտնել են (50%-ը), որ որևէ քայլ չի ձեռնարկվել, և միայն 15%-ի դեպքում է խնդիրը ոչ ֆորմալ կերպով լուծվել է և նրանք հետ են ստացել իրենց գումարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիների հակակոռուպցիոն վարքագծի և առավել կոռումպացված համարվող ոլորտների վերաբերյալ

Թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից մոտ չորս (4) տարի անց քաղաքացիների մոտ 63%-ը գտնում է, որ կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ:

Քաղաքացիների կողմից կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու հիմնական պատճառ է հասարակության քննադատությանն արժանանալու վախը: Քաղաքացիների մեկ երրորդից ավելին նշել է վախը, որ կպատժվեն՝ կկորցնեն իրենց աշխատանքը, կվտանգվեն: Միևնույն ժամանակ, որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական պատճառ քաղաքացիները նույնպես առավել հաճախ նշել են «պատժվելու բարձր ռիսկը»: Եվ միայն քաղաքացիների 19%-ն է նշել, որ կոռուպցիայից պետք է հրաժարվել, քանի որ դա հանցագործություն է:

Ըստ հանրային ընկալումների, կոռումպացված լինելու վարկանիշի տեսանկյունից վատթարացել են ՁԼՄ-ների և Հայ առաքելական եկեղեցու դիրքերը, բարելավվել է Մարդու իրավունքների պաշտպանի դիրքը:

Դատավորները և դատարանները նույնպես ընկալվում են որպես առավել կոռումպացված կառույցներ:

Հանրությունը համարում է, որ կոռուպցիան առավել տարածված է առողջապահական, լրատվական ոլորտներում և ընտրական գործընթացներում, և այն քիչ է տարածված կապի, կոմունալ և համայնքային ծառայություններում:

Քաղաքացիների մի մասը պետական մարմինների գործառույթներին ծանոթանում է նաև այդ մարմիններից ծառայություններ ստանալիս կամ դրանց անմիջականորեն առնչվելիս: Հետևապես՝ այդ մարմինների գործառույթների վերաբերյալ քաղաքացիների իմացության շրջանակը սահմանափակվում է քաղաքացիների կողմից պահանջվող/ստացվող ծառայությունների շրջանակով:

Հանրության կողմից առավել հազվադեպ նշվել է հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիների ներգավման անհրաժեշտությունը: Սա նաև կապված է այն հանգամանքի հետ, որ քաղաքացիների կեսից ավելին (54%) գտնում է, որ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար գլխավոր պատասխանատուն կառավարությունն է կամ իշխող քաղաքական ուժը, և 15%-ն է միայն կարծում, որ կոռուպցիոն երևույթների համար պատասխանատուն բոլորն են:

Ընդ որում, հակակոռուպցիոն նախաձեռնությունների ավելի հակված են մասնակցել գյուղաբնակները և 18-35 տարեկանները, այսինքն՝ երիտասարդները:

Օրենքների, օրենսդրական անկատարության և պետական մակարդակով կարգավորումների վերաբերյալ

Քաղաքացիների ընկալմամբ կոռուպցիայի տարածմանը նպաստող առավել հաճախ նշվող գործոններն են հանրության կողմից օրենքներին չհետևելը, օրենքների անկատարությունը և տնտեսական ծանր վիճակը/աղքատությունը: Առավել քիչ նշված գործոնը հակակոռուպցիոն կրթական/իրազեկման ծրագրերի սակավությունն է:

Քաղաքացիների ընկալմամբ կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթներ են խնդիրները օրինական տարբերակով լուծելու անհնարինությունը, օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից խուսափելը և պատժից/տուգանքից խուսափելը:

Հանրության ճնշող մեծամասնությունը հավանություն է տալիս ՀՀ կառավարության կողմից արդեն իրականացվող կամ դեռևս օրենքի կարգավիճակում գտնվող հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին:

Միևնույն ժամանակ, քաղաքացիների ավելի քան 45.8%-ը անարդյունավետ է գնահատել կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը: Այն ավելի արդյունավետ դարձնելու համար, նրանց ընկալմամբ, կառավարության առաջնահերթություններից պետք է լինեն պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումն ու ստուգումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու պատժի անխուսափելիության ապահովումն իրավապահների կողմից և օրենքներում ու գործադիր իշխանության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը:

Բիզնեսի և քաղաքականության՝ կոռուպցիայի կանխարգելմանը խոչընդոտող փոխկապվածության վերաբերյալ

Բնակչության մեծամասնությունը համարում է, որ քաղաքական կուսակցությունների և պետական պաշտոնյաների շահերը կախված են օլիգարխների, բիզնեսի շահերից: Մասնավորապես, խոսքը կուսակցությունների/դաշինքների, բարձրաստիճան պաշտոնյաների և միջին օղակի պաշտոնյաների շահերի՝ օլիգարխների, բիզնեսի շահերից կախվածության մասին է:

Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող մարմինների վերաբերյալ

Հանրությունը քիչ է տեղյակ, թե Հայաստանում որ պետական մարմինները և հասարակական կազմակերպություններն են իրականացնում հակակոռուպցիոն գործունեություն, քանի որ, ինչպես ցույց տվեց այս ուսումնասիրությունը, քաղաքացիների շրջանում շատ ցածր է այդ կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեություն իրականացնելու, ներառյալ կոռուպցիայի հարցերում քաղաքացիներին տեղեկատվական աջակցություն տրամադրելու մասին տեղեկացվածությունը: Քաղաքացիների կարծիքով ոս-

տիկանությունն է այն հիմնական հաստատությունը, որին քաղաքացիները կդիմեին՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար: Երկրորդ տեղում է ՀՀ վարչապետը, որին հակված են դիմել մոտ 10 անգամ ավելի քիչ քաղաքացիներ:

Ոստիկանության հակակոռուպցիոն գործունեությունն արդյունավետ է գնահատել տվյալ մարմնի հակակոռուպցիոն ֆունկցիաներին տեղյակ 13,6% քաղաքացիների 73%-ը, իսկ Ազգային անվտանգության ծառայության գործունեությունը՝ 12,4% տեղյակ քաղաքացիներից 72,3%-ը: Սա նաև ցույց է տալիս, որ չկա հանրային ընկալում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ պատժիչ գործառույթներ իրականացնող մարմինների կամ՝ պատժիչ և կանխարգելիչ գործառույթների տարանջատման վերաբերյալ:

Քաղաքացիները որպես կոռուպցիայի մասին հայտնելու միջոց նշել են նաև թեժ գծերի առկայությունը Հայաստանում, տարբեր գերատեսչություններում:

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին տեղյակ է քաղաքացիների մոտավորապես կեսը (49%), սակայն հարցվողների ընդամենը 9,4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/գործառույթների մասին: Հարկ է նշել, որ ըստ 2019 թ.-ի հարցման՝ ԿԿՀ-ի/Էթիկայի հանձնաժողովի գործունեության/գործառույթների մասին տեղյակ էր քաղաքացիների միայն 1,1%-ը:

Կոռուպցիայի դրսևորումների ընկալման վերաբերյալ

Կոռուպցիան հանրության կողմից առավելապես ընկալվում է որպես պետական պաշտոնյաներին և նրանց կոռուպցիոն գործունեությանը վերաբերող երևույթ:

Հանրության շրջանում համեմատաբար ավելի փոքր է այն մարդկանց բաժինը, որոնք համարում են, որ հետևյալները կոռուպցիոն դրսևորումներ են՝

- ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների օրը շահադիտական նպատակով ընտրական հանձնաժողովի անդամներին սննդով ապահովելը,
- պետական պաշտոնին զուգահեռ ձեռներեցությամբ զբաղվելը,
- բժշկին, ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը՝ ուշադիր վերաբերմունքի համար:

Կոռուպցիոն ռիսկ պարունակող որոշ գործողություններ հանրության կողմից դիտարկվում են որպես կոռուպցիոն դրսևորումներ, օրինակ՝

- գործարարների կողմից կուսակցություններին, դաշինքներին նախընտրական քարոզարշավի համար նվիրատվություն իրականացնելը,
- պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալը:

Գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումները հանրության ճնշող մեծամասնությունն իրավացիորեն չի համարում կոռուպցիոն դրսևորում:

Քաղաքացիների զգալի մասի կողմից պաշտոնավարմանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը չի ընկալվում որպես կոռուպցիա: Միևնույն ժամանակ, ֆինանսական բնույթի գործողությունները, ինչպես օրինակ՝ կուսակցություններին ֆինանսավորելը, պարգևավճարներ տալը առավել ռիսկային են համարվում:

Կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ

Քաղաքացիների համար տեղեկատվության հիմնական աղբյուրներ են ԶԼՄ-երը, գրեթե նույն չափով նաև ընտանիքի անդամները/ազգականները/ընկերները/ ծանոթները, ինչպես նաև (երրորդ տեղում) սոցիալական ցանցերը:

Տեղեկատվության հավաստիության առումով առավել վստահելի հեռուստաընկերություններ են համարվում «Հանրայինը», «Արմենիա» ՀԸ-ն և «Շանթ» ՀԸ-ն: Միևնույն ժամանակ, ոչ մի հեռուստաընկերությանը չվստահող հարցվածների թիվը (22,5%) գերազանցում է նույնիսկ առավել վստահելի համարվող՝ Հ1-ին վստահողների թվին (17,4%): Ընդհանուր առմամբ, համեմատած 2019 թ.-ի հետ, քաղաքացիների շրջանում մոտ 20%-ով աճել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալու ցանկությունը:

Ուստի, ՀՀ քաղաքացիները չունեն կոռուպցիայի մասին տեղեկատվության արժանահավատ լրատվական աղբյուր: Ընտանիքի անդամներից/ազգականներից/ընկերներից տեղեկանալու պրակտիկան պարունակում է լուրջ սոցիալական ռիսկեր:

Ընդհանուր առաջարկ ՀՀ Կառավարությանը և ԱԺ-ին

Հակակոռուպցիոն ռազմավարությունները և գործողությունների պլանները մշակելիս առաջնորդվել տվյալահեն մոտեցմամբ՝ հաշվի առնելով այս և այլ հարցումների, ուսումնասիրությունների արդյունքները:

Անհրաժեշտ է մշակել հակակոռուպցիոն քայլերի վերաբերյալ հստակ հաղորդակցության պլան, որը սիստեմատիկ կերպով կիրագործվի բոլոր հակակոռուպցիոն մարմինների, ինչպես նաև կառավարության կողմից:

Ազգային ժողովը կարող է ակտիվացնել խորհրդարանական վերահսկողության գործիքները հակակոռուպցիոն մարմինների հաշվետվողականության ուղղությամբ:

Հավելված 1. Հարցաթերթ

Կոռուպցիայի վերաբերյալ հանրային ընկալումներ

Բարև ձեզ: Իմ անունը _____ է: Ես աշխատում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամում: Մենք իրականացնում ենք Հայաստանում հանրային կարծիքի հարցում և կցանկանայինք Ձեր տնային տնտեսությունից մեկ չափահաս անդամի հետ հարցազրույց անցկացնել: Ձեր տնային տնտեսությունն ընտրվել է պատահական ընտրության արդյունքում: Խնդրում ենք մասնակցել մեր հարցմանը: Դրա ամփոփ արդյունքները կարող են նպաստել մեր երկրի հասարակական կյանքի առողջացմանը: Երաշխավորում ենք, որ այս հարցման արդյունքում ստացված պատասխանները կլինեն գաղտնի, և դրանք կօգտագործվեն միայն ընդհանրացված/ամփոփ տեսքով:

Այժմ եկեք առավել մանրամասն զրուցենք Հայաստանում (հակա)կոռուպցիայի հասարակական ընկալման մասին:

Հ1. Որքանո՞վ եք համաձայն, որ այս գործողությունները կոռուպցիայի դրսևորումներ են: [Ձ/Վ: Տարբերակները կարդալ պատահական հերթականությամբ]

		Լիովին համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ընդհանրապես համաձայն չեմ	ԴՊ	ՀՊ
1	Պետական պաշտոն զբաղեցնող անձին գումար առաջարկելը՝ իր օգտին որոշում, գործողություն կատարելու կամ չկատարելու համար	1	2	3	4	98	99
2	Գյուղապետարանի/քաղաքապետարանի շենքում խորհրդարանական ընտրությունների նախընտրական հանդիպումների անցկացումը	1	2	3	4	98	99
3	Բժշկին, ուսուցչին նվեր կամ ծաղիկ տալը՝ ուշադիր վերաբերմունքի համար	1	2	3	4	98	99

4	Կապերի, ծանոթության օգտագործումը կամ միջնորդությունը բարեկամի, ազգակցական սերտ կապ ունեցող անձի օգտին որոշում կայացնելու համար	1	2	3	4	98	99
5	Պետական գնումներով կնքված պայմանագրի գումարի մի մասի թողնելը գործարքը սատարած պաշտոնյային	1	2	3	4	98	99
6	Պետական պաշտոնատար անձի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումը անձնական նպատակներով	1	2	3	4	98	99
7	Բանկում գրավադրված գույքի առգրավումը բանկի կողմից՝ վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում	1	2	3	4	98	99
8	Պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալը	1	2	3	4	98	99
9	Գործարարների կողմից պետական հիմնադրամներին կատարվող բարեգործական մուծումները	1	2	3	4	98	99
10	Գործարարների կողմից կուսակցություններին/դաշինքներին կատարվող նախընտրական քարոզարշավի համար նվիրատվությունները	1	2	3	4	98	99
11	Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների օրը շահադիտական նպատակով հանձնաժողովի անդամներին սննդով ապահովելը	1	2	3	4	98	99
12	Քաղաքացու քվեն ստանալու նպատակով թեկնածուի կողմից որևէ ապրանք կամ ծառայություն խոստանալը (օրինակ, անվճար վիրահատություն կազմակերպել)	1	2	3	4	98	99
13	Պետական պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ գործարարությամբ (ձեռներեցությամբ) զբաղվելը	1	2	3	4	98	99
14	Պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ ինստիտուտի (կառույցի) կողմից անգործությունը, կամ ոչ պատշաճ աշխատանքը	1	2	3	4	98	99

Հ2. Հայաստանում ներկայումս որքանո՞վ են տարածված կոռուպցիայի հետևյալ դրսևորումները.

	Չափազանց տարածված է	Ավելի շուտ տարածված է	Ավելի շուտ տարածված չէ	Բոլորովին տարածված չէ	ԴՊ	ՀՊ
Հովանավորչությունը /ԽԾԲ/, մեր-ձավր ազգականներին պաշտոնի նշանակումը	1	2	3	4	98	99
Կաշառակերությունը	1	2	3	4	98	99
Պետական բյուջեի մսխումը կամ յուրացումը	1	2	3	4	98	99
Փողերի լվացումը	1	2	3	4	98	99
Բիզնեսի և պետական պաշտոնի համատեղումը	1	2	3	4	98	99
Պետական դրամաշնորհների տրա-մադրման ոչ թափանցիկ գործընթացը	1	2	3	4	98	99
Գնումների դեպքում «օտկատներ» կամ մաղարիչը	1	2	3	4	98	99

Հ2ա. Ձեր կարծիքով որքանո՞վ է [.....] ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ ինֆորմացիան բաց/թափանցիկ (հայտնի):

	Լիովին թափանցիկ է	Ավելի շուտ թափանցիկ է	Ավելի շուտ թափանցիկ չէ	Ընդհանրապես թափանցիկ չէ	ԴՊ	ՀՊ
Կուսակցությունների/դաշինքների	1	2	3	4	98	99
ՁԼՄ-ների	1	2	3	4	98	99
Նախընտրական քարոզարշավի	1	2	3	4	98	99
Հասարակական կազմակերպությունների	1	2	3	4	98	99

Հ2բ. Ձեր կարծիքով, որքանո՞վ են հետևյալ մարմինների/պաշտոնյաների շահերը կախված օլիգարխների, բիզնեսի շահերից:

		Լիովին կախված են	Ավելի շուտ կախված են	Ավելի շուտ կախված չեն	Ընդհանրապես կախված չեն	ԴՊ	ՀՊ
1	Կուսակցություններ, դաշինքներ	1	2	3	4	98	99
2	Բարձրաստիճան պաշտոնյաներ	1	2	3	4	98	99
3	Միջին օղակի պաշտոնյաներ	1	2	3	4	98	99

Հ5. Ըստ Ձեզ, առհասարակ, որքանո՞վ է հնարավոր նվազեցնել կոռուպցիան Հայաստանում:

1	Ընդհանրապես չի կարող նվազեցվել
2	Հնարավոր է նվազեցնել միայն մասամբ
3	Հնարավոր է էականորեն նվազեցնել
4	Հնարավոր է ամբողջովին վերացնել
98	ԴՊ
99	ՀՊ

Հ5. Ինչու՞, ո՞րն է հիմնական պատճառը, կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել [հարցնել, եթե Հ5=1 կամ Հ5=2]:

_____

Հ6. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 3-ը]

Ի՞նչ կասեք ներկայումս հետևյալ անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու աստիճանի մասին:

		Մեծապես կոռումպացված է	Որոշ չափով է կոռումպացված	Քիչ կոռումպացված է	Կոռումպացված չէ	Ծանոթ չեմ կառույցին/ չեմ լսել կառույցի մասին	ԴՊ	ՀՊ
1	Ազգային ժողովի նախագահ, աշխատակազմ, ԱԺ պատգամավորներ	1	2	3	4	95	98	99
2	ՀՀ նախագահ, նախագահի աշխատակազմ	1	2	3	4	95	98	99
3	Վարչապետ, վարչապետի աշխատակազմ	1	2	3	4	95	98	99
4	Նախարարություններ	1	2	3	4	95	98	99
5	Վարչապետին ենթակա մարմիններ (Ոստիկանություն,Ազգային անվտանգության ծառայություն, Պետական վերահսկողական ծառայություն)	1	2	3	4	95	98	99
6	Կառավարությանը ենթակա մարմիններ (Պետական եկամուտների կոմիտե, անշարժ գույքի կադաստրի կոմիտե, տեսչական մարմիններ, Քաղաքաշինության կոմիտե)	1	2	3	4	95	98	99
7	Տարածքային կառավարման մարմիններ (մարզպետ, մարզպետարան)	1	2	3	4	95	98	99
8	Քննչական մարմիններ (Հատուկ քննչական ծառայություն, Քննչական կոմիտե)	1	2	3	4	95	98	99
9	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	1	2	3	4	95	98	99
10	Դատախազություն	1	2	3	4	95	98	99
11	Դատավորներ և դատարաններ	1	2	3	4	95	98	99

12	Տեղական ինքնակառավարման մարմիններ (Երևանի ավագանի, համայնքի ղեկավար, ավագանի և համայնքապետարաններ)	1	2	3	4	95	98	99
13	Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)	1	2	3	4	95	98	99
14	Մարդու իրավունքների պաշտպան (Օմբուդսմեն)	1	2	3	4	95	98	99
15	Հաշվեքննիչ պալատ (Վերահսկիչ պալատ)	1	2	3	4	95	98	99
16	Ինքնավար անկախ պետական մարմիններ (Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով, Կենտրոնական բանկ)	1	2	3	4	95	98	99
17	Կուսակցություններ/դաշինքներ	1	2	3	4	95	98	99
18	ՀԼՄ-ներ	1	2	3	4	95	98	99
19	Հասարակական կազմակերպություններ	1	2	3	4	95	98	99
20	Բիզնես ընկերություններ	1	2	3	4	95	98	99
21	Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններ	1	2	3	4	95	98	99
22	Հայ Առաքելական Եկեղեցի	1	2	3	4	95	98	99
23	Կրոնական այլ կազմակերպություններ	1	2	3	4	95	98	99
24	Բանակ	1	2	3	4	95	98	99

Q7. Երբևէ լսե՞լ եք ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին:

1	Այո, տեղյակ եմ գործունեության/գործառույթների մասին մասին	
2	Այո, բայց չունեմ բավարար տեղեկություն գործառույթների մասին	→Հ8
3	Ոչ	→Հ8
98	ԴՊ	→Հ8
99	ՀՊ	

Հ7ա. Որքանո՞վ է արդյունավետ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կոռուպցիայի դեմ պայքարում: [Զ/Վ: Կարդալ տարբերակները]

1	Շատ արդյունավետ է
2	Ավելի շուտ արդյունավետ է
3	Ավելի շուտ արդյունավետ չէ
4	Բոլորովին արդյունավետ չէ
98	ԴՊ
99	ՀՊ

Հ8. Խնդրում եմ, ասեք, թե ըստ ձեզ, որքանո՞վ է կոռուպցիան տարածված այս ոլորտներից և ծառայություններից յուրաքանչյուրում:

		Շատ տարածված է	Ավելի շուտ տարածված է	Հազվադեպ է հանդիպում	Ընդհանրապես տարածված չէ	Տեղյակ չեմ նման ծառայության մասին	ԴՊ	ՀՊ
1	Առողջապահություն (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, ամբուլատորիաներ և այլն)	1	2	3	4	95	98	99
2	Կրթություն (մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր և այլն)	1	2	3	4	95	98	99
3	Իրավաբանական անձանց/ կազմակերպությունների գրանցում	1	2	3	4	95	98	99
4	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (ԴԱՀԿ)	1	2	3	4	95	98	99
5	Զինվորական ծառայություն (բանակ)	1	2	3	4	95	98	99
6	Ընտրական գործընթացներ (ընտրահանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթերի հաշվարկ, նախընտրական քարոզարշավ ևն)	1	2	3	4	95	98	99
7	Մաքսային ծառայություն	1	2	3	4	95	98	99
8	Հարկային ծառայություն	1	2	3	4	95	98	99
9	Լիցենզավորման/թույլտվությունների և հավատարմագրման ծառայություններ	1	2	3	4	95	98	99

10	Ճանապարհային ոստիկանության ծառայություններ	1	2	3	4	95	98	99
11	Ոստիկանության ծառայություններ (բացի ճանապարհային ոստիկանությունից)	1	2	3	4	95	98	99
12	Քրեակատարողական ծառայություններ (հիմնարկներ)	1	2	3	4	95	98	99
13	Անշարժ գույքի գրանցման (կադաստրի) ծառայություններ	1	2	3	4	95	98	99
14	Նոտարական ծառայություն	1	2	3	4	95	98	99
15	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններ	1	2	3	4	95	98	99
16	Սոցիալական ապահովության ծառայություններ (նպաստներ, թոշակներ և այլն)	1	2	3	4	95	98	99
17	Կապ (հեռախոսակապ, ինտերնետ տրամադրողներ և այլն)	1	2	3	4	95	98	99
18	Կոմունալ ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)	1	2	3	4	95	98	99
19	Համայնքային ծառայություններ (աղբահանություն, հողհատկացման, շինարարության թույլտվություններ և այլն)	1	2	3	4	95	98	99
20	Քաղաքաշինություն (հողօգտագործման թույլտվություններ, շինարարություն և այլն)	1	2	3	4	95	98	99
21	Էրատվություն (հեռուստաընկերություններ, ռադիո, թերթեր, սոցիալական մեդիա և այլն)	1	2	3	4	95	98	99

Հ10. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 4-Ը]
Ձեր ընկալմամբ, ստորև թվարկվածներից ո՞ր գործոններն են նպաստում կոռուպցիայի տարածմանը: [Ձ/Վ: Ընդունեք մինչև 3 պատասխան]

1	Պետական, համայնքային մարմինների ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը (մասնագիտական էթիկայի բացակայություն, աշխատակիցների ցածր անձնական բարոյականություն և այլն)
2	Պետության կողմից օրենքների կիրառումը չապահովելը կամ կիրառման նկատմամբ թույլ վերահսկողությունը
3	Օրենքների անկատարությունը
4	Հանրության կողմից օրենքներին չհետևելը
5	Բարիքներին, իշխանական լծակներին և այլ ռեսուրսներին ամեն գնով տիրանալու ձգտումը
6	Տնտեսական ծանր վիճակը, աղքատությունը
7	Պետական մարմինների և պաշտոնյաների հաշվետվողականության պակասը
8	Ազգային ավանդույթները և հանդուրժողականությունը
9	Հանրության կողմից վերահսկողության պակասը/դրա մեխանիզմների անկատարությունը
10	Հակակոռուպցիոն կրթական/իրազեկման ծրագրերի սակավությունը
11	Դատական համակարգի անկատարությունը
12	Այլ (նշեք) _____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ11. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 5-Ը] **Պատկերացրեք ինչ-որ մեկը կաշառք է տալիս, ստորև նշվածներից ո՞րը կլինի նրա կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթը:** [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները: Ընդունեք մինչև 3 պատասխան:]

1	Խնդիրը լուծելու այլ՝ օրինական տարբերակ չկա
2	Խուսափելը պատժից/տուգանքից/այլ պատասխանատվությունից
3	Խուսափելը օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից
4	Պատշաճ/նորմալ վերաբերմունք (ծառայություն) ստանալը
5	Արտոնյալ վերաբերմունք ստանալը
6	Հակաօրինական գործարք իրականացնելը
7	Այլ (նշեք)
98	Չգիտեմ
99	Հրաժարվում եմ պատասխանել

Հ12. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 6-Ը]

Ասացեք, խնդրեմ, Դուք տեղյա՞կ եք կառավարության կողմից իրականացված/ող հետևյալ գործողությունների/նախագծերի մասին:

		Այո	Ոչ	ԴՊ	ՀՊ
1	ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարություն	1	0	98	99
2	Հակակոռուպցիոն մոնիթորինգի հարթակ (www.anti-corruption.gov.am)	1	0	98	99
3	Տարբեր պետական մարմինների թեժ գծեր	1	0	98	99
4	Ազդարարման՝ կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հայտնելու, միասնական էլեկտրոնային հարթակ (www.azdararir.am)	1	0	98	99
5	Մասնակցային ժողովրդավարության էլեկտրոնային գործիքներ (e-request, e-hotline, e-petition)	1	0	98	99
6	Ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտում	1	0	98	99
7	Իրավական ակտերի նախագծերի մշակմանը հասարակության մասնակցության ապահովման՝ e-draft հարթակ	1	0	98	99
8	«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն	1	0	98	99
9	Հանրային ծառայությունների միասնական գրասենյակներ	1	0	98	99
10	Այլ (նշեք) _____	1	0	98	99

Հ13. Կառավարությունը հայտնել էր մի քանի հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին, որոնց մի մասն արդեն օրենքի կարգավիճակում է: Դուք հավանություն տալի՞ս եք, թե ոչ հետևյալին.

		Լիովին հավանություն եմ տալիս	Ավելի շուտ հավանություն եմ տալիս	Ավելի շուտ հավանություն չեմ տալիս	Ընդհանրապես հավանություն չեմ տալիս	Չեմ լսել այդ մասին/տեղյակ չեմ	ԴՊ	ՀՊ
1	Ապօրինի ծագում ունեցող գույքի և ունեցվածքի վերադարձ/բռնագանձում պետության կողմից	x1	2	3	4	97	98	99
2	Դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգում (վեթինգ)	1	2	3	4	97	98	99
3	Գույքի և եկամուտների համատարած հայտարարագրում	1	2	3	4	97	98	99
4	Հակակոռուպցիոն դատարանների ստեղծում	1	2	3	4	97	98	99
5	Հակակոռուպցիոն կոմիտեի (քննչական մարմնի) ստեղծում	1	2	3	4	97	98	99
6	Այլ [նշել]	1	2	3	4	97	98	99

Հ14. Ըստ Ձեզ, որքանո՞վ է արդյունավետ ՀՀ ներկայիս կառավարության պայքարը կոռուպցիայի դեմ: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները:]

1	Լիովին արդյունավետ է
2	Ավելի շուտ արդյունավետ է
3	Ավելի շուտ արդյունավետ չէ
4	Բոլորովին արդյունավետ չէ
98	ԴՊ
99	ՀՊ

Հ15. Ձեր կարծիքով, որքանո՞վ է Հայաստանի ներկայիս կառավարությունը անկեղծ կոռուպցիան հաղթահարելու հարցում: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները:]

1	Լիովին անկեղծ է
2	Ավելի շուտ անկեղծ է
3	Ավելի շուտ անկեղծ չէ
4	Բոլորովին անկեղծ չէ
98	ԴՊ
99	ՀՊ

Հ17. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 7-Ը]
Նշեք խնդրեմ, հակակոռուպցիոն պայքարի այն ուղղությունները, որոնց վրա ՀՀ կառավարությունը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի: [Ձ/Վ. Ընդունեք մինչև 3 պատասխան:]

1	Վարչական կոռուպցիայի (քաղաքացիների հետ ամենօրյա շփումներում դրսևորվող) հաղթահարում
2	Հանրային ծառայողների բարեվարքության/ օրինավորության/ ազնվության ամրապնդում
3	Պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրում և ստուգում
4	Օրենքներում ու կառավարության որոշումներում կոռուպցիոն ռիսկերի վերացում
5	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և պատժի անխուսափելիության ապահովում իրավապահների կողմից
6	Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում
7	Թափանցիկ և հաշվետու կառավարում
8	Դատական համակարգի բարեփոխում
9	Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձ՝ առանց քրեական հետապնդման
10	Քաղաքացիների ներգրավվում հակակոռուպցիոն պայքարում
11	Ոչինչ պետք չէ անել
12	Այլ (նշեք)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Այժմ եկեք առավել մանրամասն զրուցենք, թե ինչպիսին է ներկայումս (հակա)կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում:

Հ19. Ձեր կարծիքով, ներկայումս որքա՞ն մեծ է կոռուպցիայի (կաշառակերության, հովանավորչության /ԽԾԲ/ հանրային բարիքի, ֆինանսների, բյուջեի մսխման/յուրացման, փողերի լվացման, քաղաքական կոռուպցիայի և այլն) ազդեցությունը Ձեր և Ձեր շրջապատի/համայնքի վրա: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները:]

1	Շատ մեծ է
2	Ավելի շուտ մեծ է
3	Ավելի շուտ փոքր է
4	Ազդեցություն չունի
97	[ՄԻ ԿԱՐԴԱՑԵՔ] (Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի)
98	ԴՊ
99	ՀՊ

Հ20. Ձեր կարծիքով, պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի չափը և այն պահանջելու/ակնկալելու դեպքերի հաճախականությունը 2018թ. ապրիլ-մայիսից հետո ինչպե՞ս են փոխվել:

		Կաշառքի չափը	Կաշառքի, հովանավորչության և այլ կոռուպցիոն դեպքերի հաճախականությունը
1	Էականորեն աճել են	1	1
2	Որոշ չափով աճել են	2	2
3	Մնացել են նույնը	3	3
4	Որոշ չափով նվազել են	4	4
5	Էականորեն նվազել են	5	5
98	ԴՊ	98	98
99	ՀՊ	99	99

Հ 21. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 10-Ը]

Ինչի՞ վրա եք հիմնվում կոռուպցիայի մակարդակը գնահատելիս: [Հ/Վ: Ընդունեք մինչև 3 պատասխան՝ խնդրելով դասավորել դրանք ըստ կարևորության:]

1	Անձնական փորձ (օրինակ՝ Դուք ստիպված եք եղել կաշառք, նվեր տալ կամ որևէ ծառայություն մատուցել՝ ծառայության դիմաց)
2	Տեղեկություններ ընտանիքի անդամներից, ազգականներից, ընկերներից կամ ծանոթներից
3	Հասարակական կազմակերպությունների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն (հանրային իրազեկում)
4	Լրատվամիջոցների տված տեղեկատվություն (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր և այլն)
5	Սոցիալական ցանցերից ստացված տեղեկատվություն
6	Այլ (նշեք)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ23. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 8-Ը]

Պատկերացրեք պաշտոնյային կաշառք են առաջարկել, նշվածներից ո՞րը կլինի պաշտոնյայի կողմից կաշառքը վերցնելու հիմնական շարժառիթը: [Հ/Վ: Կարդացեք տարբերակները: Ընդունեք 1 պատասխան:]

1	Քանի որ բոլորն են վերցնում/սովոր են
2	Քանի որ ծառայությունը մատուցելուց հետո շնորհակալությունը կաշառք չի կարող համարվել
3	Քանի որ ուզում են ավելի լավ ապրել
4	Քանի որ պետք է ընտանիք պահեն
5	Քանի որ պարտավոր են մի մասը «վերև» տալ
6	Այլ (նշեք)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ24. Պատկերացրեք՝ որևէ պաշտոնյա հրաժարվել է ներքաշվել կոռուպցիայի մեջ: Ըստ Ձեզ՝ ո՞րն է հրաժարվելու հիմնական դրդապատճառը: [Ձ/Վ. Մի կարդացեք տարբերակները: Նշեք այն միակ տարբերակը, որին հարցվողի պատասխանն առավել մոտ է:]

1	Քանի որ պատժվելու ռիսկը բարձր է
2	Քանի որ դա նրա համար բարոյապես ընդունելի չէ
3	Որովհետև դա հանցագործություն է
4	Որպեսզի նպաստի կոռուպցիայի նվազեցմանը/վերացմանը
5	Այլ (նշեք)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ25_26. Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք գործ ունեցե՞լ եք հետևյալ հաստատությունների հետ կամ օգտվե՞լ եք հետևյալ ծառայություններից: [Ձ/Վ: Կարդացեք տողերը և ամեն մեկի համար հաջորդաբար լրացրեք Q7, Q8:

		Հ25. Առնչվել ե՞ք: Նշեք՝ Այո =1, => Հ26 Ոչ =0=> Հ30 ԴՊ=98=> Հ30 ՀՊ= 99=> Հ30	Հ26. Եթե ԱՅՈ, ստիպված եղե՞լ եք հավելյալ վճար տալ/ստանալ ("ստանալ" նշել միայն տարբերակ 20-ի դեպքում): Նշեք՝ Այո=1 => Հ29 Ոչ=0=> Հ30 ԴՊ=98 => Հ30 ՀՊ=99 => Հ30
1	Առողջապահություն (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, ամբուլատորիաներ և այլն):		
2	Բժշկական սոցիալական փորձաքննության ծառայություններ		
3	Սոցիալական ապահովության ծառայություններ (նպաստներ, թոշակներ և այլն)		
4	Կրթություն (մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր և այլն)		
5	Զինվորական ծառայություն (բանակ)		
6	Ճանապարհային ոստիկանության ծառայություններ (վարորդական իրավունքի ստացում և այլն)		
7	Ոստիկանության ծառայություններ, բացի ճանապարհային ոստիկանությունից		
8	Քրեակատարողական ծառայություններ (հիմնարկներ)		

9	Հարկադիր կատարման ծառայություն (դատարանների որոշումների կատարում)		
10	Նոտարական ծառայություն		
11	Իրավաբանական անձանց/ կազմակերպությունների գրանցում		
12	Մաքսային ծառայություն		
13	Հարկային ծառայություն		
14	Լիցենզավորման/թույլտվությունների և հավատար-մագրման ծառայություններ		
15	Անշարժ գույքի գրանցման (կադաստրի) ծառայութ-յուններ		
16	Պետական գնումներ		
17	Կոմունալ ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներ-գիա)		
18	Համայնքային ծառայություններ (աղբահանություն, հողհատկացման, շինարարության թույլտվություններ և այլն)		
19	Բնական ռեսուրսների (ընդերք, անտառային, ջրային պաշարներ և այլն) շահագործման թույլտվությունների տրամադրում		
20	Նախընտրական քարոզարշավ		
21	Անձնագրա-հրավիրային (վիզայի) ծառայություններ		
22	Կապ (հեռախոսային, ինտերնետ ծառայություններ և այլն)		
24	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծա-ռայություններ		
25	Քաղաքաշինություն (հողօգտագործման թույլտվութ-յուններ, շինարարություն և այլն)		
26	Լրատվություն (հեռուստաընկերություններ, ռադիո, թերթեր, սոցիալակն մեդիա և այլն)		

Q29. Նշեք խնդրեմ այն անձի սեռը, ում վերջին անգամ ստիպված էիք լրացուցիչ վճար կատարել կամ նվեր տալ: (Հարցնել եթե Հ26=1)

1	Տղամարդ
2	Կին
99	ՀՊ

Այժմ եկեք առավել մանրամասն զրուցենք (հակա)կոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակի մասին:

Հ31. Նշեք, խնդրեմ, երեք զանգվածային լրատվամիջոց, որոնցից կարելի է վստահելի նորություններ իմանալ Հայաստանում կոռուպցիայի մասին:
[Հ/Վ: Նշեք մինչև երեք ՀԼՄ: Ոչ մի ՀԼՄ չնշելու դեպքում, ՀԼՄ 1 դաշտում լրացրեք «Ոչ մի»]

1	ՀԼՄ 1
2	ՀԼՄ 2
3	ՀԼՄ 3
98	ԴՊ
99	ՀՊ

Հ34. Նշեք, խնդրեմ, Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող Ձեզ հայտնի պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները:
[Հ/Վ: Ընդունեք բոլոր հնարավոր պատասխանները, մի կարդացեք:]

1	Ինֆորմացիայի ազատության կենտրոն
2	Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
3	«Հետք» հետաքննող լրագրողներ
4	Իրազեկ քաղաքացիների միավորում
5	Իրավաբանների հայկական ասոցիացիա (AYLA)
6	Հակակոռուպցիոն ՀԿ-ների կոալիցիա
7	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
8	«Ասպարեզ» ժուռնալիստների ակումբ
9	Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ
10	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
11	ՀՀ հաշվեքննիչ պալատ
12	ՀՀ վարչապետին ենթակա Պետական վերահսկողական ծառայություն
13	Դատախազություն
14	Ոստիկանություն
15	Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ)
16	Հատուկ քննչական ծառայություն (ՀՔԾ)
17	Քննչական կոմիտե (ՔԿ)
18	Արդարադատության մարմիններ (դատարան)

19	Այլ (նշեք)_____
20	Ոչ մի
98	ԴՊ
99	ՀՊ

Հ36. Ըստ Ձեզ, որքանո՞վ արդյունավետ են գործում կոռուպցիայի դեմ պայքարի նշված պետական մարմինները կամ հասարակական կազմակերպությունները Հայաստանում: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները, հարցրեք, եթե Հ34=/98 կամ 99]
(Հարցվողը պատասխանում է Հ34-ում նշված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասին)

1	.....	Շատ արդյունավետ	Ավելի շուտ արդյունավետ	Ավելի շուտ ոչ արդյունավետ	Լիովին անարդյունավետ	ԴՊ	ՀՊ
2	.....						
3	.....						
4	.....						
98	.....						
99	.....						

Հ37. Հայաստանում ոմանք տարբեր պատճառներով չեն ցանկանում հայտնել կոռուպցիոն դեպքերի մասին: Ձեր կարծիքով՝ որո՞նք են կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու պատճառները: [Ձ/Վ: Նայեք Քարտ 11-ին, ընդունեք մինչև 3 պատասխան]

1	Մեր հասարակությունում կոռուպցիայի մասին հայտնելը քննադատվում է կամ համարվում է «գործ տալ»
2	Կոռուպցիայի մասին հայտնողին կպատժեն, օրինակ՝ աշխատանքից կհեռացնեն, պատասխանատվության կենթարկեն ‹‹սուտ» մատնության համար
3	Նրանք կարծում են, որ պաշտոնյաները, ում նրանք կդիմեն, նույնպես կոռումպացված են / այդ պաշտոնյանեը ևս ներգրավված են կոռուպցիայի մեջ
4	Նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի
5	Կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ քո շահերին չի առնչվում
6	Ընդհանրապես վերաբերում կոռուպցիոն դեպքերին, քանի որ դրա մասնակիցներն այդ քայլին դիմում են հիմնականում կարիքից դրդված
7	Հայտնելու գործընթացներին ծանոթ չեն
8	Հայտնելը դժվար է և ժամանակատար
9	Երկուստեք փոխշահավետ է
10	Դժվար ապացուցվող հանցագործություն է
11	Այլ (նշեք)_____

Հ38. Եթե անձամբ առնչվեք կոռուպցիայի հետ, այդ մասին կհայտնե՞ք համապատասխան մարմիններին:

1	Այո	
2	Ոչ	→Հ41
98	ԴՊ	→Հ41
99	ՀՊ	→Հ41

Հ39. Եթե այո, ապա առաջին հերթին ու՞մ կդիմեք: [Հ/Վ: Մի կարդացեք տարբերակները, ընդունեք 1 պատասխան:]

1	ՀՀ Նախագահին
2	ՀՀ Վարչապետին
3	Ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի ղեկավարին
4	Տվյալ պաշտոնյայի վերադասին
5	Դատարանին
6	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին
7	Հատուկ քննչական ծառայությանը
8	Պետական վերահսկողության ծառայությանը (ՊՎԾ)
9	Ոստիկանությանը
10	Դատախազությանը
11	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին
12	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին/հակակոռուպցիոն խորհրդին
13	Հաշվեքննիչ պալատին/վերահսկիչ պալատին
14	Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ներին
15	Կոռուպցիոն դեպքեր լուսաբանող ԶԼՄ-ներին
16	Միջազգային կազմակերպություններին
17	Ձեր սատարած կուսակցության/դաշինքի ներկայացուցիչներին ԱԺ-ում
18	Ազդարարման անանուն հարթակ (www.azdararir.am)
19	Տվյալ մարմնի բարեվարքության հարցերով պատասխանատուներին
20	Այն նույն կառույցին, որի հետ կապված է կոռուպցիայի դեպքը
22	Այլ (նշեք)_____

Հ41. Ինչու՞ չեք դիմի: [Հ/Վ: Մի կարդացեք, նշեք այն տարբերակը, որը համապատասխանում է հարցվողի ասածին, անհրաժեշտության դեպքում գրանցեք բառացի պատասխանը:]

1	Չեմ կարծում որ կօգնեն/անիմաստ է
2	Չեմ վստահում
3	Դժվար ապացուցելի է
4	Վախենում եմ հետևանքներից
5	Ժամանակ չունեմ
6	Ուրիշները կդիմեն
7	Նրանք ևս կոռումպացված են
8	Չգիտեմ ում և ինչպես դիմել
9	Վճարելը կամ նվել տալը տարածված երևույթ է, ինչու՞ պետք է ես դիմեմ/ահազանգեմ
10	Այլ (նշեք)
98	ԴՊ
99	ՀՊ

Հ42. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 12-ը:]
Կոռուպցիայի հարցում ինչպիսի՞ աջակցության կարիք ունեք:
Կա արդյո՞ք հակակոռուպցիոն օժանդակության այլ տեսակ, որը կցանկանայիք, որ Ձեզ տրամադրեին: [Հ/Վ: Ընդունեք բոլոր հնարավոր պատասխանները]

1	Տեղեկատվություն՝ կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին
2	Տեղեկատվություն հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին
3	Տեղեկատվություն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել/բողոքել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում
4	Տեղեկատվություն կոռումպացված պաշտոնյաներին պատժելու գործընթացի և /կամ նրանց բռնագրված գույքի վերաբերյալ
5	Անվճար իրավախորհրդատվություն՝ կոռուպցիայի մասին բողոքը ձևակերպելու, տեղեկատվություն և ապացույցներ, ու փաստաթղթեր հավաքագրելու համար
6	Անվճար ներկայացուցչություն իրավապահ մարմիններում և դատարանում / փաստաբանական ծառայություն
7	Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և իրազեկման գործունեություն
8	Պետական մարմինների թեժ գծերի մասին մանրամասն տեղեկատվություն
9	Ձեզ առնչվող կոռուպցիոն դեպքի լուսաբանում լրատվամիջոցներում (ավանդական կամ սոցիալական ցանցերում)
10	Այլ (նշեք)_____
11	Ոչ մի
98	ԴՊ
99	ՀՊ

Այժմ եկեք առավել մանրամասն զրուցենք կոռուպցիայի մասին անձնական պատասխանատվության պատկերացումների շուրջ:

Հ44. Պատրա՞ստ եք/ցանկանու՞մ եք մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում:

1	Այո	
2	Ոչ	Անցում---->Հ44դ
98	ԴՊ	Անցում ---->Հ45
99	ՀՊ	Անցում ---->Հ45

Հ44ա. Անձամբ Դուք ի՞նչ եք պատրաստ անել՝ Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար: Թվարկեք խնդրեմ մինչև երեք կոնկրետ քայլ, որ անձամբ կձեռնարկեիք կոռուպցիայի դեմ պայքարում: [Հ/Վ: Մի կարդացեք տարբերակները, համապատասխանեցրեք:]

1	Մասնակցել հանրության կողմից վերահսկողության միջոցառումներին
2	Պահպանել կարգը և հետևել օրենքներին
3	Խուսափել հանրային ծառայությունների համար կաշառք տալուց
4	Հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց
5	Հայտնել (ազդարարել) պատկան մարմիններին
6	Հայտնել պետական մարմինների թեժ գծերի միջոցով
7	Ընտրել հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների/դաշինքների
8	Խոսել ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին
9	Մասնակցել հակակոռուպցիոն ստորագրահավաքների/միջոցառումների/ցույցերի
10	Հայտնել հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին
11	Բոյկոտել կոռումպացված բիզնեսը
12	Մասնակցել և աջակցել հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին
13	Պատրաստ չեմ որևէ քայլ ձեռնարկել
14	Ներգրավվել հակակոռուպցիոն ՀԿ-ի աշխատանքներին
15	Այլ (նշել)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ44բ. Որքանո՞վ են Ձեզ հետևյալ ռեսուրսները/հմտությունները բավարար այդ գործողությունները կատարելու համար:

	Լիովին բավարար է/են	Ավելի շուտ բավարար է/են	Ավելի շուտ բավարար չէ/չեն	Ընդհանրապես բավարար չէ/չեն	ԴՊ	ՀՊ
Ժամանակը	1	2	3	4	98	99
Ֆինանսական ռեսուրսները	1	2	3	4	98	99
Գիտելիքը	1	2	3	4	98	99
Տեղեկատվությունը	1	2	3	4	98	99
Հմտությունները	1	2	3	4	98	99

Հ44դ. Ինչու՞ չեք ցանկանում գործել / ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում:

1	Սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար
2	Այն կարող է ինձ համար բացասական հետևանքներ ունենալ
3	Ընդհանրապես եմ մոտենում կոռուպցիոն դեպքերին, քանի որ մարդիկ դրան դիմում են կարիքից ելնելով
4	Կոռուպցիան ինձ ոչ մի վնաս չի տալիս
5	Այլ, նշել_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ45. [ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 13-ը]
Նշվածներից ո՞րն եք երբևէ կատարել կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով:
[Ձ/Վ: Ընդունեք մինչև 3 պատասխան]

1	Խուսափել եմ հանրային ծառայությունների համար կաշառք տալուց
2	Հրաժարվել եմ պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց
3	Հայտնել (ազդարարել) եմ պատկան մարմիններին
4	Հայտնել եմ պետական մարմինների թեժ գծերի միջոցով
5	Կոռուպցիայի դեպքի մասին հաղորդել եմ Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով (www.azdararir.am)
6	Ընտրել եմ հակակոռուպցիոն իմաստով վստահություն ներշնչող կուսակցությունների/դաշինքների
7	Խոսել եմ ազգականներիս և ընկերներիս հետ կոռուպցիայի անընդունելի լինելու մասին
8	Մասնակցել եմ հակակոռուպցիոն ստորագրահավաքների/միջոցառումների/ցույցերի
9	Հայտնել եմ հեռուստառադիո հաղորդումներին կամ սոցիալական մեդիաներին

10	Բոյկոտել եմ կոռումպացված բիզնեսը
11	Մասնակցել և աջակցել եմ հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը և կրթական արշավներին
12	Ներգրավվել եմ հակակոռուպցիոն ՀԿ-ի աշխատանքներին
13	Ոչինչ չեմ կարողացել անել
14	Այլ (նշել)_____
98	ԴՊ
99	ՀՊ

Հ49. Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք կամ Ձեր տ/տ անդամներից որևէ մեկը հայտնել է արդյո՞ք որևէ պաշտոնյայի կողմից կոռուպցիոն երևույթի դրսևորման մասին:

1	Այո	
2	Ոչ	Անցում ---->Հ52
98	ԴՊ	Անցում ---->Հ52
99	ՀՊ	Անցում ---->Հ52

Հ50. [ՑՈՒՑՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 14-ը]
Ու՞մ կամ որ կազմակերպությանն էր ուղղված այդ դիմումը: [Ձ/Վ: Նշեք բոլոր հնարավոր տարբերակները]

1	1. ՀՀ նախագահին
2	2. ՀՀ Վարչապետին
3	3. Ոլորտային նախարարին կամ տվյալ մարմնի ղեկավարին
4	4. Տվյալ պաշտոնյայի վերադասին
5	5. Դատարանին
6	6. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին
7	7. Հատուկ քննչական ծառայությանը
8	8. Պետական վերահսկողության ծառայությանը (ՊՎԾ)
9	9. Ոստիկանությանը
10	10. Դատախազությանը
11	11. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին
12	12. ոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին/հակակոռուպցիոն խորհրդին

13	13. Հաշվեքննիչ պալատին/վերահսկիչ պալատին
14	14. Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ներին
15	15. Կոռուպցիոն դեպքեր լուսաբանող ԶԼՄ-ներին
16	16. Միջազգային կազմակերպություններին
17	17. Ձեր սատարած կուսակցության/դաշինքի ներկայացուցիչներին ԱԺ-ում
18	18. Ազդարարման անանուն հարթակ (www.azdararir.am)
19	19. Տվյալ մարմնի բարեվարքության հարցերով պատասխանատուներին
20	20. Այն նույն կառույցին, որի հետ կապված էր կոռուպցիայի դեպքը
21	21. Այլ (նշեք)_____
98	98. ԴՊ
99	99. ՀՊ

Հ51. Որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգացել, երբ հայտնել եք կոռուպցիոն երևույթի կամ դեպքի մասին: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները:]

1	Լիովին պաշտպանված
2	Ավելի շուտ պաշտպանված
3	Ավելի շուտ չպաշտպանված
4	Բոլորովին չպաշտպանված
98	ԴՊ
99	ՀՊ

Հ51ա. Ի՞նչ տեղի ունեցավ կոռուպցիայի դեպքի մասին հաղորդելուց հետո: [Ձ/Վ: Կարդացեք տարբերակները և ընդունեք 1 պատասխան:]

1. Պետական պաշտոնյայի դեմ հարուցվել է պաշտոնական ընթացակարգ
2. Խնդիրը ոչ ֆորմալ կերպով լուծվեց, և Ձեզ վերադարձրեցին գումարը/նվերը
3. Ձեզ խորհուրդ են տվել չշարունակել հաղորդման գործընթացը
4. Ձեր հաղորդման հետ կապված քայլեր չեն ձեռնարկվել
5. Դուք կրել եք միջադեպի մասին հաղորդելու բացասական հետևանքները
6. Այլ (նշել)_____

Հ52. Որքանո՞վ եք բավարարված այն գործողություններից, որ ձեռնարկվել են կոռուպցիոն երևույթի մասին հաղորդում տալիս: [Հ/Վ: Կարդացեք տարբերակները]

1	Լիովին բավարարված եմ	Անցում-->Հ54
2	Ավելի շուտ բավարարված եմ	Անցում -->Հ54
3	Ավելի շուտ բավարարված չեմ	
4	Բոլորովին բավարարված չեմ	
98	(ԴՊ)	Անցում -->Հ54
99	(Հրաժարվ. եմ պատասխ.)	Անցում -->Հ54

Հ53. Ո՞րն է բավարարված չլինելու պատճառը: [Հ/Վ: Կարդացեք տարբերակները:]

1	Հարցը լուծում չի ստացել
2	Ձևական մոտեցում է ցուցաբերվել
3	Այլ (նշեք)_____
98	(Չգիտեմ)
99	(Հրաժարվ. եմ պատասխ.)

Հ54. Ըստ Ձեզ, ովքե՞ր են պատասխանատվություն կրում Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար: [Հ/Վ: Մի կարդացեք: Ընդունեք բոլոր հնարավոր պատասխանները:]

1	ԱԺ-ում ներկայացված բոլոր քաղաքական ուժերը
2	Կառավարությունը/Իշխող քաղաքական ուժը
3	Հակակոռուպցիոն մարմինները/կառույցները
4	Քաղաքացիներն անհատապես
5	Քաղաքացիները հավաքականորեն
6	Հասարակական կազմակերպությունները
7	ՀԼՄ-ները
8	Միջազգային կազմակերպությունները
9	Բոլորը
10	Այլ (նշեք)_____
98	ԴՊ
99	ՀՊ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժ1. Տարիքը _____

Ժ2. Սեռը

1	Իգական
2	Արական

Ժ3. Հարցազրույցի ամսաթիվը _____ (օր/ամիս)

Ժ4. Գրանցել հարցազրույցի տևողությունը
[Հ/Վ: Օգտագործել 24-ժամյա ժամացույցը]

Հարցազրույցի սկիզբը: ___:___

Ժ5. Մարզը

1	ԵՐԵՎԱՆ
2	ԱՐԱԳԱԾՈՏՆ
3	ԱՐԱՐԱՏ
4	ԱՐՄԱՎԻՐ
5	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
6	ԼՈՌԻ
7	ԿՈՏԱՅՔ
8	ՇԻՐԱԿ
9	ՍՅՈՒՆԻՔ
10	ՎԱՅՈՑ ՁՈՐ
11	ՏԱՎՈՒՇ

Ժ6. Բնակավայրը

1	Քաղաքային
2	Գյուղական

Ժ7. Ձեր ներկայիս կրթամակարդակը:

1	Տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)
2	Հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)
3	Միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)
4	Նախնական մասնագիտական (արհեստագործական)
5	Միջին մասնագիտական
6	Թերի բարձրագույն
7	Բարձրագույն մասնագիտական (բակալավր, մասնագետ)
8	Բարձրագույն մասնագիտական (մագիստրոս)
9	Հետբուհական մասնագիտական
99	ՀՊ

Ժ8. Ձեր ներկայիս ընտանեկան կարգավիճակը:

1	Երբեք ամուսնացած չեմ եղել
2	Ամուսնացած եմ
3	Ամուսնալուծված եմ
4	Այրի
5	Համակեցություն
99	ՀՊ

Ժ9. Ունե՞ք արդյոք երեխաներ

1	Այո
2	Ոչ

Ժ10. Ձեր ներկայիս աշխատանքային կարգավիճակը
[Ձ/Վ: Ընդունել առավելագույնը 2 տարբերակ]

1	Աշխատում եմ լրիվ դրույքով	
2	Աշխատում եմ կես դրույքով՝ մեկ աշխատավայրում	
3	Աշխատում եմ կես դրույքով՝ մեկից ավելի աշխատավայրերում	
4	Չեմ աշխատում, աշխատանք եմ փնտրում	-> Անցում Հ12.
5	Չեմ աշխատում, աշխատանք չեմ փնտրում	-> Անցում Հ12.
6	Թոշակառու	-> Անցում Հ12.
7	Ուսանող	-> Անցում Հ12.
8	Տնային տնտեսուհի	-> Անցում Հ12.
9	Այլ/նշել_____	-> Անցում Հ12.
99	ՀՊ	-> Անցում Հ12.

Ժ11. Ի՞նչ աշխատանք եք կատարում այժմ: [Ընդունել մինչև 2 պատասխան]

1	Ինքնազբաղված, առանց վարձու աշխատողների
2	Ինքնազբաղված, ունեմ վարձու աշխատողներ
3	Ինքնազբաղված գյուղատնտեսությունում
4	Ունեմ փոքր ընտանեկան բիզնես / տնային տնտեսության արտադրություն
5	Վարձու աշխատող՝ փոքր տեղական կազմակերպության
6	Միջին կամ խոշոր մասնավոր կազմակերպության աշխատող
7	Պետական աշխատող
8	Արտասահմանյան/միջազգային կազմակերպության աշխատող
9	Տեղական կամ միջազգային հասարակական կազմակերպության աշխատող
10	Այլ /նշել
98	ԴՊ
99	ՀՊ

Ժ12. Միջին հաշվով որքա՞ն է կազմում Ձեր տ/տ ամսական եկամուտը:
[Ձ/Վ: Ցույց տվեք Քարտը 1-ը]

1	Մինչև 91.000 ՀՀ դրամ
2	91.001– 148.000 ՀՀ դրամ
3	148.001 – 220.000 ՀՀ դրամ
4	220.001 – 321.000 ՀՀ դրամ
5	321.001 – 620.000 ՀՀ դրամ
6	620.001 ՀՀ դրամ և ավելի
98	ԴՊ
99	ՀՊ

Ժ13. Խնդրում եմ նայեք քարտ 2-ին և ասեք՝ նշված տարբերակներից ո՞րն է առավել լիարժեք արտացոլում Ձեր ընտանիքի/ տ/տ ներկա ֆինանսական վիճակը:
[Ձ/Վ: Ցույց տվեքպ Քարտ 2-ը]

1	Սնունդ չենք կարող գնել
2	Սնունդ կարող ենք, հագուստ չենք կարող գնել
3	Սնունդ և հագուստ կարող ենք գնել, կարողանում ենք խնայել, բայց չենք կարող թանկարժեք իրեր, օր.՝ ավտոմեքենա գնել
4	Թանկարժեք իրեր, օր.՝ ավտոմեքենա, կարող ենք գնել, բայց ոչ բնակարան կամ ամառանոց
5	Ամեն ինչ կարող ենք գնել, ներառյալ բնակարան կամ ամառանոց
98	ԴՊ
99	ՀՊ

Հավելված 2. Ժողովրդագրության ցուցանիշները

Աղյուսակ 1. Բաշխումն ըստ սեռի (կանխատեսվող ըստ իրական ընտրանքի)

Սեռ	Ընտրանքում բաշխումը	Բնակչության բաշխումը
Արական	44%	45%
Իգական	56%	55%

Աղյուսակ 2. Բաշխումն ըստ տարիքի (կանխատեսվող ըստ իրական ընտրանքի)

Տարիք	Ընտրանքում բաշխումը	Բնակչության բաշխումը
18-35	30%	35%
36-55	38%	33%
56+	31%	32%

Աղյուսակ 3. Բաշխումն ըստ բնակավայրի տիպի (կանխատեսվող ըստ իրական ընտրանքի)

Բնակավայրի տիպը	Ընտրանքում բաշխումը	Բնակչության բաշխումը
Երևան	38%	37%
Այլ քաղաքներ	28%	27%
Գյուղեր	34%	36%

Աղյուսակ 4. Բաշխումն ըստ մարզերի (կանխատեսվող ըստ իրական ընտրանքի)

Մարզ	Ընտրանքում բաշխումը	Բնակչության բաշխումը
Երևան	38%	37%
Արագածոտն	4%	4%
Արարատ	8%	9%
Արմավիր	8%	9%
Գեղարքունիք	7%	8%
Լոռի	7%	8%
Կոտայք	8%	7%
Շիրակ	8%	8%
Սյունիք	5%	5%
Վայոց Ձոր	2%	2%
Տավուշ	4%	4%
Ընդհանուր	100%	100%

Հավելված 3. Կոռուպցիայի համաթվի ցուցանիշների հաշվարկ

ՀԲԾ ցուցանիշ 2. Կոռուպցիան նվազեցնելու համար գործելու պատրաստակամ մարդկանց տոկոսային աճ (ըստ սեռի, տարիքային խմբերի, բնակավայրի տեսակի):

Նշված ցուցանիշի հաշվարկման համար օգտագործվել է 2021 թվականի ելակետային հետազոտության հարցաթերթի Հ44ա-ն (Անձամբ Դուք ի՞նչ եք պատրաստ անել՝ Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար: Թվարկեք խնդրեմ մինչև երեք կոնկրետ քայլ, որ անձամբ կձեռնարկեիք կոռուպցիայի դեմ պայքարում:): Համարիչում այն մարդկանց թիվն է, ովքեր ընտրել են գոնե մեկ տարբերակ, իսկ հայտարարում հարցվողների ընդամենը թիվն է, բացի ՀՊ պատասխանողներից: 2021 թվականին այս ցուցանիշի ելակետային արժեքը կազմել է **42,8%**:

ՀԲԾ ցուցանիշ 3. Կոռուպցիայի դեմ պայքարի հարցում կառավարության լավ աշխատանքը գրանցած մարդկանց տոկոսային աճ

Նշված ցուցանիշի հաշվարկման համար օգտագործվել են 2021 թվականի ելակետային հետազոտության հարցաթերթի Հ14-ը (Ըստ Ձեզ, որքանո՞վ է արդյունավետ ՀՀ ներկայիս կառավարության պայքարը կոռուպցիայի դեմ: Լիկերտի 4 տարբերակներ պարունակող սանդղակ, տարբերակները չեն կարդացվել): Համարիչում այն մարդկանց թիվն է, ովքեր պատասխանել են «Լիովին արդյունավետ է» և «Ավելի շուտ արդյունավետ է», իսկ հայտարարում հարցվողների ընդամենը թիվն է, բացի ՀՊ պատասխանողներից: 2021 թվականին այս ցուցանիշը կազմել է **51,0%**:

ՀԲԾ ցուցանիշ 14. Կոռուպցիայի և բարեվարք ինստիտուտների վերաբերյալ հանրային ընկալման տոկոսային աճ

Նշված ցուցանիշի հաշվարկման համար օգտագործվել են 2021 թվականի ելակետային հետազոտության հարցաթերթի Հ34-ը (Նշեք, խնդրեմ, Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող Ձեզ հայտնի պետական մարմինները և հասարակական կազմակերպությունները: Ցանկ, ընդունեք բոլոր հնարավոր պատասխանները, չկարդալ:): Համարիչում բոլոր մարդկանց թիվն է, բացի նրանցից ովքեր ընտրել են «Ոչ մի», «ԴՊ»

և «ՀՊ» տարբերակները, իսկ հայտարարում հարցվողների ընդամենը թիվն է, բացի ՀՊ պատասխանողներից: 2021 թվականին այս ցուցանիշը կազմել է 33,9%:

ՀԲԾ լրացուցիչ ցուցանիշ. Հանրային ծառայություններից օգտվողների տոկոսը, ովքեր կաշառք են տվել նախորդ 12 ամիսներին:

Նշված ցուցանիշի հաշվարկման համար օգտագործվել են 2021 թվականի ելակետային հետազոտության հարցաթերթի Հ26-ը (Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք գործ ունեցե՞լ եք հետևյալ հաստատությունների հետ կամ օգտվե՞լ եք հետևյալ ծառայություններից: Ցանկ, կարդալ տարբերակները: Եթե ԱՅՈ, ստիպված եղե՞լ եք հավելյալ վճար տալ/ստանալ ("ստանալ" նշել միայն տարբերակ 20-ի դեպքում): Այո/Ոչ/ԴՊ/ՀՊ): Համարիչում այն մարդկանց թիվ է, ովքեր պատասխանել են «Այո» գոնե մեկ տարբերակին, իսկ հայտարարում՝ հարցին բոլոր պատասխանողների թիվը: 2021 թվականին այս չափորոշիչ կազմել է **9,5%**:

Նշում: Հարցազրուցավարների վերապատրաստման ընթացքում տեղեկացվել է, որ խոսքը գնում է ոչ պաշտոնական հավելյալ վճարների մասին, սակայն սա չի նշանակում, որ հարցվողները որպես հավելյալ վճար չէին կարող ընկալել օրենքով սահմանված վճարովի ծառայությունները, օրինակ ԴԱՀԿ-ում և մաքսային ծառայությունում:

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

CRRC
Armenia